

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

Յուսադրիչ Նախանշաններ

Շարք մը առաջ Հայաստանն ու հայութիւնը բեւակոխեցին նոր դարաշրջան: Հայրենիքը կարողացաւ իր վրայէն թօթափել հանրապետականներու քսանամեայ իշխանութիւնը, որ ժողովուրդը մատուցած էր յուսահատութեամբ: Չսպասուած մէկ պահուցում հայաստանի բնակչութիւնը մէկ մարդու նման ոտքի կանգնեցաւ տապալելու համար իշխանութիւն մը, որ երկիրը հասցուցած էր անդունդի եզրին:

Հեռացող վարչակարգը թեւ ինկած է, սակայն տակաւին շնչահեղձ չէ եղած ու պիտի փորձէ վերականգնել իր նախկին դիրքերը: Յեղափոխութեան խաղաղ բնոյթը առիթ կու տայ անոր ներկայացուցիչներուն մնալու հրապարակի վրայ ու քաղաքական գործունէութիւն ծաւալելու, փոխանակ խոյս տալու երկրէն ել կամ բանտերու մէջ յայտնուելու, ինչպէս սովորաբար կը պատահի յեղափոխութիւններու պարագային:

Միւս կողմէ, նոր վարչակարգը լծուած է գործի, անցեալի սեւ հետքերը մաքրելու, արատաւոր օլիկարխիկ համակարգը կազմաքանդելու, արդարութիւնն ու հաւասարութիւնը վերականգնելու եւ հայ ժողովուրդին դարձեալ յոյս եւ վստահութիւն ներշնչելու ուղղութեամբ:

Արդէն իսկ ձեւաւորուած է նոր կառավարութիւն՝ ընդհանրապէս երիտասարդ տարրերէ բաղկացած: Ուժային կառոյցները անցած են նոր վարչապետի հսկողութեան տակ: Երկրէն ներս վերացած է վախի մթնոլորտը, յայտարարուած է տնտեսական մեծաշնորհներու վախճանը եւ այդ ուղղութեամբ առնուած առաջին քայլերը դրական են: Այս օրերուն ամենուրեք կը խօսուի հայրենադարձութեան եւ տնտեսական ներդրումներ կատարելու պատրաստակամութեան մասին: Այս բոլորը մեծ յոյսեր կը ներշնչեն Հայաստանի ապագայի նկատմամբ:

Դրական երեւոյթներ պարզուցանան արտաքին քաղաքականութեան առումով: Նորընտիր վարչապետը այցելեց Ստեփանակերտ, ուր բանաձեւելով իր տեսակետները, առաջնահերթութիւն նկատեց Արցախի Հանրապետութեան ներկայացուցիչներու վերադարձը բանակցութիւններու սեղանին:

Սոչիի մէջ մասնակցելով Եւրասիական Տնտեսական Միութեան ժողովին, վարչապետը կարողացաւ հաւասարե-հաւասար բանակցիլ անդամ միւս երկիրներու ղեկավարներուն հետ:

Նիկոլ Փաշինեանի առաջին մէկ շաբաթը եթէ նկատենք նախանշան գալիքի ամիսներուն եւ տարիներուն, դրական երեւոյթները անելի քան ակնբերել են ու յուսադրիչ:

«ՄԱՍԻՍ»

Վարչապետ Փաշինեան. «Փութինի Հետ Հանդիպումը Շատ Արդիւնաւէտ Էր»

« Ա զ ա տ ու թ իւ ն » ռատիոկայանի հետ զրոյցի ընթացքին վարչապետ Փաշինեանը յայտնած է, թէ Ռուսիոյ նախագահ Փութինի հետ Սոչիի մէջ կայացած հանդիպումը «շատ արդիւնաւէտ» եղած է:

Միեւնոյն ժամանակ, Փաշինեան ընդգծած է, որ Սոչիի բոլոր հանդիպումներու ժամանակ քննարկուած են Հայաստանը «յուզող բոլոր հարցերը»՝ ներառեալ Ատրպէյճանին սպառնալից թեման մատակարարման հարցը. - «Ամենալայն շրջանակ է քննարկուել հարցերի եւ շատ արդիւնաւէտ հանդիպում էր»:

Հարցին, թէ արդեօք Պելառուսի նախագահ Լուքաշենքոյի հետ հանդիպման արժարձուած են զէնքի եւ Ատրպէյճանի հետ յարաբերութիւններու հետ կապուած հարցը, վարչապետը պատասխանած է. - «Այո, բոլոր հնարաւոր հարցերը մեզ յուզող բարձրացուել են բոլոր հանդիպումներում»:

Սոչիի մէջ, Եւրասիական բարձրագոյն խորհուրդի նիստին ընդառաջ, Փութինի եւ Փաշինեանի միջեւ տեղի ունեցաւ հանդիպում: Ապա, լրագրողներու առջեւ հանդէս գալով Ռուսիոյ առաջնորդը շնորհաւորեց Փաշինեանը եւ ըսաւ. «Թոյլ տուէք նաեւ, որ անձամբ շնորհաւորեմ Ձեզ Հայաստանի կառավարութեան ղեկավարի պաշտօնին ընտրուելու կա-



Հայաստանի եւ Ռուսաստանի ղեկավարները՝ Սոչիի մէջ կայացած հանդիպման ընթացքին

պացուութեամբ: Մեր դիրքորոշումը, կը կարծեմ, բոլորին յայտնի է, մենք Հայաստանը կը համարենք Ռուսիոյ մերձաւոր դաշնակիցն ու գործընկերը տարածաշրջանին մէջ: Սա կը վերաբերի թէ՛ տնտեսական զարգացման, թէ՛ անվտանգութեան խնդիրներուն: Դուք գիտէք, որ Ռուսիան կը շարունակէ մնալ Հայաստանի կարեւոր առեւտրատնտեսական գործընկերը: Վերջին շրջանին կը նկատուի նաեւ ապրանքաշրջանառութեան աճ, սա շատ լաւ միտում է, եւ յոյսով եմ, որ կը յաջողինք

ոչ միայն պահպանել սա, այլեւ կրկնապատկել»:

Փութինը կարեւոր նկատեց միջազգային կառուցներու մէջ Երեւանի եւ Մոսկուայի համագործակցութիւնը. «Ձեզ յաջողութիւններ կը մաղթենք կառավարութեան ղեկավարի պաշտօնին եւ յոյս ունիմ, որ մեր յարաբերութիւնները կը շարունակեն զարգանալ նոյն կերպ, ինչպէս եղած է մինչեւ օրս: Մենք նոյն աշխուժութեամբ կ'աշխատինք միջազգային ասպարէզի,

Շար.ը էջ 4

ՍԴՀԿ «Փարամագ» Մասնաճիւղի Կազմակերպութեամբ Հրապարակային Հանդիպում Պոլսահայ Լրագրող Արիս Նալճրի Հետ



Տեսարան մը Արիս Նալճրի հետ հրապարակային հանդիպումէն

Հինգշաբթի, Մայիս 10, 2018, ՀՄՄ-ի Կարօ Սողանալեան սրահէն ներս, Ս.Դ.Հ.Կ. Փարամագ Մասնաճիւղի կազմակերպութեամբ տեղի ունեցաւ զրոյց-հանդիպում Պոլսահայ լրագրող Արիս Նալճրի հետ, որ գաղութէն ներս կը գտնուէր Պոլսահայ Միութեան հրաւերով: Ձեռնարկին ներկայ էին Ս.Դ.Հ.Կ.ի Կեդրոնական վարչութեան եւ վա-

րիչ Մարմնի անդամներ, Պոլսահայ միութեան անդամներ եւ հիւրեր: Ս.Դ.Հ.Կ. «Փարամագ» մասնաճիւղի անունով Լենա Մանուկեան ներկայանալուն բարի գալուստ մաղթեց եւ անդրադարձաւ այս օրերուն Հայրենիքի եւ սփիւռքի մէջ տիրող անսահման ուրախու-

Շար.ը էջ 5

Թրամփ Շնորհաւորած է Փաշինեանին

ԱՄՆ նախագահ Տրամփը շնորհաւորած է Նիկոլ Փաշինեանին՝ Հայաստանի վարչապետ ընտրուելուն առթիւ:

Միացեալ Նահանգներու Հայաստանի դեսպանատան տարածած հարորդագրութեան համաձայն, Սպիտակ Տան ղեկավարը Փաշինեանին յղած շնորհաւորական նամակին մէջ ըսած է. - «Անհամբերութեամբ կը սպասեմ մեր համագործակցութեան՝ փոխադարձ հետաքրքրութիւններ կայացնող բազմաթիւ բնագաւառներու մէջ, անոնց շարքին՝ առեւտուրի, ժողովրդավարական հաստատութիւններու եւ տարածաշրջանային սպառնալիցներու ամրապնդման ոլորտներէն ներս:

«Յաջողութեամբ կուուպցիալի դէմ պայքարի, քաղաքական բոլոր ուժերու համախմբումը եւ Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան խաղաղ կարգաւորումը կը նպաստեն այդ ջանքերուն եւ կ'երաշխատեն Հայաստանի պայծառ ապագան: Լաւագոյն մաղթանքներս Ձեզ եւ հայ ժողովուրդին», - ըսած է Ամերիկայի նախագահը Հայաստանի նորընտիր վարչապետ Նիկոլ Փաշինեանին յղուած նամակին մէջ:

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Արցախի Հարցի Թնճուկը. Ինչու Են Աղմկում Նախկինները

ՀԱՅԿ ԴԱԹԵԱՆ

Մինչ Նիկոլ Փաշինեանը նոր կաբինետին թողած մեկնել է Սոչի՝ մասնակցելու ԵԱՏՄ նախագահական գագաթաժողովին, Երեւանում թէ՛ կրքեր են բորբոքում Ղարաբաղեան հարցի շուրջ՝ նախկինների մասնակցութեամբ: Առիթը Նիկոլ Փաշինեանի՝ Մայիսի 9-ին Արցախում արած յայտարարութիւնն է, որը դարձաւ հրապարակային բանավէճի թեմա:

Նախ Փաշինեանի յայտարարութեանը արձագանքեց պաշտպանութեան նախկին նախարար Վիգէն Սարգսեանը: Նորանշանակ վարչապետը, չիշեցնենք, ասել էր, թէ Հայաստանը Արցախի խնդրում հակամարտող կողմ է, ինչպէս նաեւ շեշտել էր, թէ Արցախը պէտք է լիարժէք մասնակցի բանակցային գործընթացին:

Վիգէն Սարգսեանը, արձագանքելով Նիկոլ Փաշինեանին, յայտարարել է, թէ Հայաստանը տարիներ շարունակ հրաժարուել է հակամարտող կողմ ընկալուելու գաղափարից, աւելին, ըստ պաշտպանութեան նախկին նախարարի, Ատրպէյճանը մշտապէս ցանկացել է Հայաստանին ներկայացնել հակամարտող կողմ: «Հայաստանի վարչապետը Ղարաբաղի հիմնախնդրի կարգաւորման շուրջ յայտնեց մի շարք դիրքորոշումներ, որոնք, ըստ իս, կարող են վտանգաւոր լինել: Վարչապետը յայտարարել է, որ կտրուկ շրջադարձեր չեն լինելու արտաքին քաղաքականութեան բնագաւառում, բայց միեւնոյն ժամանակ ակնարկել, որ Հայաստանը հակամարտութեան կողմ է: Դա միշտ եղել է Ատրպէյճանի պնդումը, այնինչ միջազգային հանրութիւնը գիտի, որ Հայաստանն Արցախի անվտանգութեան երաշխաւորն է, բանակցային գործընկեր, բայց ոչ երբեք «հակամարտութեան կողմ»: Դա կարող է հեռուն գնացող հետեւանքներ ունենալ: Վերջապէս (Փաշինեանի կողմից) արուած յայտարարութիւնների մէջ

կան նաեւ բանակցային մանրամասներին իրազեկ չլինելու դրսեւորումներ», - նշել է Վիգէն Սարգսեանը:

Սրան ի պատասխան՝ հրապարակային մեկնաբանութեամբ հանդէս եկաւ ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը՝ շեշտելով, որ խնդրի նրբութիւններին իրականում չի տիրապետում ոչ թէ նորանշանակ վարչապետը, այլ հենց ինքը՝ պաշտօնաթող նախարար Վիգէն Սարգսեանը. «Հայաստանը, Ատրպէյճանը եւ Ղարաբաղը միջազգային հանրութեան կողմից «դարբաղեան հակամարտութեան կողմի» կարգավիճակ են ստացել ԵԱՀԿ 1994թ. Դեկտեմբերի 6-ի Բուդապէսի գագաթնաժողովի ամփոփիչ փաստաթղթում եւ աւելի յստակ՝ ԵԱՀԿ ղեկավար խորհրդի նախագահի՝ 1995թ. Մարտի 31-ի Պրահեան պարզաբանման մէջ: Այսօրեայ ակնյայտ է դառնում, որ Վիգէն Սարգսեանի արտայայտած այն միտքը, թէ, իբր, Ատրպէյճանն է, որ մշտապէս պնդել է Հայաստանը ճանաչել դարբաղեան հակամարտութեան կողմ, նոնսենս է: Ատրպէյճանն իրականում դա՛ չէ, որ պնդել է, այլ այն, որ Հայաստանը ճանաչուի ոչ թէ դարբաղեան հակամարտութեան, այլ դարբաղեան պատերազմի կողմ, այսինքն՝ ազրեսոր: Ատրպէյճանի այդ ձգտումը հայկական դիւանագիտութեան փայլուն ջանքերի շնորհիւ վիճեցուել է ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդի չորս բանաձեւերում, որոնցում յստակօրէն ամրագրուած է, որ Ղարաբաղին սահմանակից ատրպէյճանական շրջանները գրաւուել են ոչ թէ Հայաստանի բանակի, այլ տեղի հայկական զինուած ուժերի (local Armenian forces) կողմից: Եթէ Հայաստանի պաշտպանութեան նախարարը չի հասկացել այս տարրական իրողութիւնների տարբերութիւնը, ապա հայ ժողովուրդը պէտք է ուրախ լինի, որ ազատուել է իրեն Ազգ-Բանակի հայր հռչակած այդ անձնաւորութիւնից», -

իր մեկնաբանութեան մէջ նշել է Լեւոն Տէր-Պետրոսեանը եւ յաւելել, որ «հակամարտութեան լիարժէք ու իրաւահասար կողմի» Լեւոնային Ղարաբաղի միջազգայնօրէն ճանաչած կարգավիճակի ձեռքբերումը հայկական դիւանագիտութեան մեծագոյն նուաճումն էր, որը «մսխուեց Ռոբերտ Քոչարեանի, մեղմ ասած, յանցաւոր անզգուշութեան պատճառով, ինչը դարձաւ Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման գործընթացում ծագած բոլոր յետագայ բարդութիւնների հիմքը»:

Յաջորդաբար հրապարակային յայտարարութեամբ հանդէս եկաւ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարեանի պաշտօնական կայքը՝ ընդգծելով, որ Ղարաբաղին, որպէս կողմ բանակցային գործընթացից հեռացրել է ոչ թէ Քոչարեանը, այլ հենց ինքը՝ Լեւոն Տէր-Պետրոսեանը. «Պատմական փաստերն ապացուցում են, որ ԼՂՀ ներկայացուցիչները դադարել են մասնակցել բանակցային գործընթացին Ռոբերտ Քոչարեանի՝ ՀՀ նախագահ ընտրուելուց առնուազն մէկ տարի առաջ: Իսկ Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահների հանդիպումներն ու բանակցութիւնները պարբերաբար կազմակերպուել էին՝ սկսած 1990 թուականից՝ Մինսկի գործընթացին զուգահեռ: Լեւոն Տէր-Պետրոսեանը բանակցել է եւ Այազ Մուխալիբովի, եւ Աբուլֆազ Էլչիբեյի, եւ Հեյդար Ալիեւի հետ: Աւելին, միեւնոյն ժամանակ յաճախակի հանդիպումներ էին կազմակերպուել երկու նախագահների ներկայացուցիչների՝ Ժ. Լիպարիտեանի եւ Վ. Գուրուզադեի միջեւ (1995-96թթ. տեղի է ունեցել 11 այդպիսի հանդիպում)», - նշում է Քոչարեանի կայքը:

Լեւոն Տէր-Պետրոսեանին պատասխանելու գալթակողութեանը չէր դիմացել նաեւ Վիգէն Սարգսեանը: Նա նշել էր, որ առաջին նախագահի մօտեցումները դարբաղեան կարգաւորման հարցում յայտնի են, եւ դրանք ժամանակին

դարձան իր հրաժարականի եւ իր գլխաւորած ՀԱԿ-ի՝ 2017թ. խորհրդարանական ընտրութիւններում բացարձակ տապալման ակնյայտ պատճառ: «Անկեղծ յոյս ունեմ, որ Նիկոլ Փաշինեանը չի կիսում իր այդ հանրայն մօտեցումներն Արցախում եւ կարեւորում եմ արտաքին քաղաքական մօտեցումների շուրջ արհեստավարժ թիմ ձեւաւորելու խնդիրը՝ անհատական մօտեցումները որպէս երկրի կարծիք ներկայացնելը բացառելու նպատակով: Յատկապէս այս պարագայում, երբ վարչապետ ընտրուած անձը առիթ չի ունեցել լայն հանրային եւ նեղ մասնագիտական քննարկումներ անցկացնել արտաքին քաղաքականութեան հարցերի շուրջ իր հայեցակարգային մօտեցումների վերաբերեալ», - նշել է Վիգէն Սարգսեանը:

Թէ իրականում ինչ մօտեցումներ ունի վարչապետ Նիկոլ Փաշինեանը Ղարաբաղեան հարցի շուրջ, թերեւս ունի յաւելեալ պարզաբանման կարիք: Վիգէն Սարգսեանը մի հարցում ճիշտ է՝ Փաշինեանը թերեւս չի հասցրել ծանօթանալ բանակցային գործընթացի բոլոր նրբութիւններին, ինչը վստահաբար կ'անի առաջիկայում: Սակայն յատկանշական է, որ Ղարաբաղեան հարցը դառնում է քննարկման խնդիր, ընդ որում, երկրի նախկին ղեկավարների միջեւ փոխադարձ մեղադրանքների տեսքով: Հայաստանի հակամարտող կողմ լինել-չլինելը կարելի է եւ պէտք է տեսնելու պէս ճիշտ ձեւակերպել, սակայն ամենակարեւորն այստեղ Արցախի բանակցային կողմ ճանաչելն է: Եթէ դա նոր վարչապետին յաջողուի, պէտք է ընդունել, որ նա իսկապէս շատ լուրջ քայլ է անում Արցախի խնդրի լուծման ուղղութեամբ: «ՀԱՅԵԼԻ»

Ինչպէս է Հայաստանում Մահանում «Չուզահեռ Պետութիւնը»

ՆԱՅԻՐԱ ՀԱՅՐՈՒՄԵԱՆ

Հայ գործարարները զարմանքով պատմում են, թէ ինչպէս է հեշտացել ապրանքների մաքսագեր-ծումը՝ 4 րոպէ նախկին 4 ժամուտ փոխարէն: Հայաստանի գործատու-ների միութեան նախագահ Գագիկ Մակարեանը պնդում է, որ մաքսատան աշխատակիցները մաքսերը գանձում են հաշիւ ապրանքագրերի հիման վրայ, այլ ոչ թէ կամայական կերպով՝ ում համար շուկայական, ում համար իջեցուած գներով:

Գագիկ Մակարեանն ասում է, որ այստեղ են թաքնուած Հայաստանում մենաշնորհների արմատները: Աւելի շատ մաքսեր ու հարկեր վճարող ներմուծողը շուկայում մրցունակ չէ: Իսկ դա նշանակում է, որ ամբողջ շուկան զբաղեցնում է այն ընկերութիւնը, որը յանցաւոր գործարքի մէջ է մտնում ՊԵԿ-ի հետ:

Նիկոլ Փաշինեանը վարչապետի պաշտօնն ստանձնելուց անմիջապէս յետոյ յայտարարել է, որ Հայաստանում այլեւս մենաշնորհներ չեն լինելու:

Հայաստանում պաշտօնապէս

մենաշնորհներ չկան, կան գերիշխող դիրքով ընկերութիւններ: «Թղթերով ամէն ինչ կարգին է», բայց իրականում հայկական շուկան բաժանուած է մենաշնորհների ու օլիգարխների միջեւ: Բաժանուած է յանցաւոր պայմանաւորութեան թիւերով, յստակ քուտաններով, «օբչակին» վճարումներով, եւ այդ պայմանաւոր-ւածութիւններով իւրաքանչիւրը գիտի, թէ որքան պէտք է պիւտճէ վճարի, որքան՝ ընդհանուր գանձարկին եւ որքան պահի իրեն:

Երկրում Մասմանադրութիւնից ու օրէնքներից բացի գոյու-թիւն է ունեցել գուզահեռ պետութիւն կոչու օրէնքներով, որտեղ խախտողներին պատժել են ողջ խստութեամբ: Միայն կուսակա-րելի է, թէ ում մօտ է ստուերային պետութեան «կանոնակարգը» եւ գլխաւորը՝ վճարումների գրանցամատեանը:

Տնտեսութեան այդպիսի բաշխման մասին է վկայում վարդանեան եղբայրների վարքը, ովքեր յեղափոխութեան յաղթանակից յետոյ խորհրդարանից հետ են կանչել երկու պտղաբանութիւնների, որոնք ընտրուել էին «Գրանդ Հոլ-

դինգի» անունից: Այսինքն, խորհրդարանը նոյնպէս բաժանուած է եղել օլիգարխների միջեւ եւ արտացոլում էր «գուզահեռ պետութեան» դրուածքը:

Շատերն ապրիլեան յեղափոխութիւնն իշխանափոխութիւն են անուանում, քանի որ չի փոխուել պետութեան կառավարման կառուցուածքն ու ձեւը: Բայց եթէ ենթադրենք, որ Ապրիլին լուծարուել է «գուզահեռ պետութիւնը», ապա դա իրապէս յեղափոխութիւն է:

Քաղաքական գործարքն արդէն ուժի մէջ չէ, որովհետեւ Հայաստանում այլ իշխանութիւն է, իսկ դա նշանակում է, որ ստուերային մենաշնորհներն ու քուտաններն ինքնըստինքեան կորցնում են ուժը:

Նիկոլ Փաշինեանի համար հեշտ է, որովհետեւ ստուերային պայմանաւորութեան թիւերն ընկնում են շուկայ: Դրանք, իհարկէ, կարող են յայտնուել, սակայն այդ դէպքում կատարուած յեղափոխութիւնը կը կորցնի իմաստը: Առաջին քայլերը, օրինակ՝ մաքսատների բացումը, վկայում է, որ գուզահեռ պետութիւնն աստիճանաբար լուծարուում է:

«ԼՐԱԳԻՐ»



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁՎԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԷԱՏԱՊԱՐԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՎԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ինքնաշարժներով երթ՝ Երեւանի քաղաքապետի Հրաժարականի Պահանջով



Երեւանի մէջ ինքնաշարժներով երթ՝ քաղաքապետ Տարօն Մարգարեանի հրաժարականի պահանջով

Երեւանի քաղաքապետ Տարօն Մարգարեանի հրաժարականը պահանջող քաղաքացիները կրկին ինքնաշարժներով երթ իրականացուցած են:

Յոյցի կազմակերպիչներէն Գագիկ Պաղտասարեանը, որ աւագանիի նախկին անդամ է, պարզաբանած է՝ Տարօն Մարգարեանը պէտք է հեռանայ, քանի որ իշխանութենէն հեռացած է Հանրապետական կուսակցութեան ղեկավար Սերժ Սարգսեանը. - «Մենք ասում ենք՝ տղերք, մենք ձեր հետ հարց չունենք անձնական: Ոչ էլ լուրջ ինչ-որ խնդիրներ ունենք: Մենք լուրջ հարց, խնդիրներ ունենք ձեր քաղաքական հայրերի հետ, որոնք այլեւս ոնց որ թէ չկան: Հիմա դուք ի՞նչ էք էս ազգից ուզում: Չէ՞ք մնալու: Տարբերակ չկայ մնալու: Ասում ենք՝ հանգիստ, խաղաղ հեռացէք: Եւ ո՞չ դա վերաբերում է Տարօնին, Պողոսին կամ Պետրոսին, այլ դա վերաբերում է Հանրապետական կուսակցութեան բոլոր այն կա-

ռավարիչներին, ովքեր այսօր դեռ գտնուում են իշխանական լծակները վրայ»:

Քաղաքապետի հրաժարականը առնուազն բարոյական քայլ կ'ըլլար, վստահ է աւագանիի «Ելք» խմբակցութեան անդամ Անահիտ Բախշեանը: Անոր համոզմամբ եւս Մարգարեանը պէտք է հեռանայ իր քաղաքական խումբի հետ միասին:

Քաղաքապետի հրաժարականը պահանջող քաղաքացիները նաեւ նշած են, որ Հանրապետական ըլլալէ զատ Տարօն Մարգարեանի գլխաւորած քաղաքային իշխանութիւնը տարիներ շարունակ անօրինականութիւններով զբաղած է, իսկ քաղաքի համար եղած ծախսերն ալ ուռճացուած ձեւով ներկայացուած են:

Եռագոյն դրօշներով ծածկուած ինքնաշարժները երթով անցած են մայրաքաղաքի կեդրոնական, ապա ծայրամասային փողոցներով: Այն տեւած է մօտ երկու ժամ:

Գլխաւոր Դատախազ Ա. Դաւթեան Հրաժարական Տալու Մտադրութիւն Զուցի

Գլխաւոր դատախազ Արթուր Դաւթեանը հրաժարական տալու մտադրութիւն չունի:

«Անկախ մարմինների համար դրա համար սահմանուած են անկախութեան երաշխիքներ: Այդ երաշխիքները մէկը դրանց կազմաւորման կարգն է: Հիմա, եթէ գործադիր իշխանութեան փոփոխութեան պարագայում պէտք է անկախ մարմինները հրաժարական տան, ես կարծում եմ, որ մենք այդ երաշխիքները կ'ոտնահարենք», - Ազգային ժողովին «Ազատութեան» հարցին ի պատասխան յայտարարած է Դաւթեանը:

Յեղափոխութենէն յետոյ ալ գլխաւոր դատախազը համաձայն չէ վարչապետ Նիկոլ Փաշինեանի տեսակէտի հետ եւ շարունակած է պնդել. «Ես ասել եմ, հիմա էլ ասում եմ՝ չկան քաղաքապետի պահանջներ»:

Արթուր Դաւթեանը խորհրդարան եկած էր ներկայացնելու Դատախազութեան նախորդ տարուայ գործունէութիւնը: Ինչո՞ւ եւ որո՞ւ հրահանգով 22 Ապրիլին ձերբակալուեցան ներկայիս վարչապետ Նիկոլ Փաշինեանը, առաջին փոխվարչապետ Արարատ Միրզոյեանը եւ պատգամաւոր Սատուկ Միքայէլեանը: Պատգամաւոր էտմոն Մարութեանը ըսած է. «Քաղաքական պրոցես (գործըն-

թաց). իրաւական գործընթաց այստեղ չկայ: Եւ ես Ձեզ կը խնդրեմ, որ ասեք, թէ ո՞վ է Ձեզ ասել, ո՞վ է հրահանգել, որ նշուած պրոցեսը սկսէք»:

«Ձեզ եւ բոլորին վստահեցնում եմ՝ ոչ մի քաղաքական նկատառում չի եղել, պարոն Մարութեան», արձագանգած է գլխաւոր դատախազը, - «Եւ ինձ ոչ ոք ոչ մի բան չի յանձնարարել: Ես իրականացրել եմ մասնագիտական գործունէութիւն»:

Գլխաւոր դատախազը չէ թաքցուցած՝ Փաշինեանը ու միւսները ազատ արձակելու որոշումը արդէն կայացուցած է քաղաքական քննարկումներու, մասնաւորապէս վարչապետի այն ժամանակուայ առաջին տեղակալ Կարէն Կարապետեանի դիրքորոշմանը ծանօթանալու արդիւնքով:

Պատասխանելով լրագրողներու հարցերուն՝ գլխաւոր դատախազը եւս մէկ անգամ յայտարարած է, չեղափոխութեան առաջնորդները ձերբակալուեցին անօրինական հաւանքներ կազմակերպելու եւ իրականացնելու համար: Արթուր Դաւթեանը համամիտ չէ այն պնդմանը, որ 22 Ապրիլին Նիկոլ Փաշինեանն ու շարժման միւս առաջնորդները, ոչ թէ ձերբակալուած այլ առեւանգուած են:

«Մեր Թերթը Կը Քննադատի Բոլորին, Եթէ Քննադատութեան Հիմքեր Տեսնի, Այդ Թուում՝ Վարչապետին». Աննա Յակոբեան



Վարչապետ Փաշինեանի կինը՝ Աննա Յակոբեան կը պատասխանէ ունկնդիրներու հարցերուն

«Մեր թերթն ի հարկէ կը քննադատի բոլորին, եթէ քննադատութեան հիմքեր տեսնի, այդ թուում՝ վարչապետին», - «Ֆէյսպուքեան ասուլիս» հաղորդման ժամանակ ըսած է «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Աննա Յակոբեանը՝ վարչապետ Փաշինեանի կինը:

Օգտատէրերէն մէկու դիտարկմանը, թէ «Հայկական ժամանակ»-ը կը դառնայ իշխանա-

կան հարթակ, Յակոբեանը պատասխանած է. - «Ես երաշխաւորում եմ, որ բոլորի համար թերթը բաց է, անկախ նրանից, թէ իրենք որ քաղաքական ուժին են պատկանում, իրենք էս պահին ընդդիմութիւն են, նախկինում իշխանութիւն են եղել, կամ հակառակը, բոլորի համար թերթը հարթակ է, որը նրանք կարող են ազատօրէն օգտագործել, եւ որեւէ սահմանափակում չկայ եւ չի կարող լինել»:

«Քաղբանտարկեալները Պէտք է Ազատ Արձակուին Իրաւական Հիմունքներով»

Քաղաքական իրադրութեան փոփոխութենէն յետոյ երկրի ամենահրատապ հարցը քաղբանտարկեալներու ազատ արձակումն է: Լրագրողներու հետ հանդիպման նշած են իրաւապաշտպաններ Աւետիք Իշխանեանը եւ Արթուր Սաքունցը:

«Անտրիաս Ղուկասեանը արդէն ազատ արձակուեցաւ, անկէ բացի քաղբանտարկեալներ են Շանթ Յարութիւնեանը իր ընկերներու հետ, որոնց պատիժը անհամաչափ է եւ լաւագոյն պարագային վարչական կրնար ըլլալ, Հայկ Կիւրեղեանը, որու պատիժը չափազանցուած էր, Արարատ Սանդուկեանը, Պամուկէլ Պապայեանը եւ Ժիրայր Սեֆիլեանը», - նշած է Աւետիք Իշխանեանը:

Ան շեշտած է, որ յատկապէս Ժիրայր Սեֆիլեանի, Գէորգ Սաֆարեանի եւ Սամուէլ Պապայեանի գործերը ընդհանրապէս հնարուած են: Այս խումբը, բացի ազատ արձակ-

ուելէ, պէտք է նաեւ արդարացուի: Ինչ կը վերաբերի «Սասնայ Ծռերուն», Աւետիք Իշխանեանը ըսած է, որ այստեղ պէտք է իրադրութեան փոփոխութիւն յօդուածը կիրառել եւ մաս մը ազատ արձակել, կամ պայմանական ազատել, բացի ոստիկանութեան հետ կապուած սպանութիւններու հարցերէն, ուր պէտք է արդար դատավարութիւն:

Արթուր Սաքունցը ըսած է, որ որոշ անձերու խափանման միջոցը պէտք է փոխել, բայց այս ողջ գործընթացը պէտք է կատարուի իրաւական մօտեցմամբ: Ոչ իրաւական մօտեցմամբ ազատութիւն տալը ոչինչով կը տարբերի ոչ իրաւական մօտեցմամբ ազատութեանէն գրկելէ:

Թէեւ Նիկոլ Փաշինեանը խոստացած է, որ հաշուեյարդար պիտի չըլլայ, բայց իրաւապաշտպանները շիտակ կը գտնեն, որ շատերը հեռացուին համակարգէն, հրահանգ տուողները պէտք է պատիժ կրեն:

Իրաւապաշտպանները Դժգոհ են Օսիպեանի Ոստիկանապետ Նշանակումով

Իրաւապաշտպան ժաննա Ալեքսանեանը նոյնպէս նշած է՝ Օսիպեանը ոստիկանապետի պաշտօնին նշանակելը անյաջող որոշում էր, հանրութեան դժգոհութիւնը այս առումով տեղին է եւ քաղաքացիական հասարակութիւնը իրաւունք ունի բարձրաձայնել իր մտահոգութիւնները:

Վալերի Օսիպեանի նշանակումին համար դժգոհութիւն յայտնած է նաեւ Կիւմրիի «Ասպարէզ» ակումբի նախագահ Լեւոն Բարսեղեանը, որ «Մերժիր Սերժիր» նախաձեռնութեան ժամանակ միացած էր համաժողովրդական շարժումին: Ան ըսած է.

«Միւս կողմից համարում եմ, որ գուցէ Նիկոլը որոշել է Օսիպ-

եանի միջոցով հենց մաքրել տալ այն համակարգը, որտեղ երկար տարիներ ծառայել է եւ եղել է ենթակայ»:

Իրաւապաշտպանները մտահոգութիւններ ունին նաեւ ԱԱԾ տնօրէնի նշանակման հետ կապուած:

Իրաւապաշտպանները նաեւ ընկերային ցանցերու միջոցով լուրջ դժգոհութիւններ յայտնած են, ոչ միայն Օսիպեանը ոստիկանապետի պաշտօնին նշանակելու համար, այլեւ՝ Ազգային անվտանգութեան ծառայութեան պետի պաշտօնին 38-ամեայ Արթուր Վանեցեանի նշանակման համար, ըստ մամուլի, անոր ընտանիքին կը պատկանին շարք մը առեւտրային գործարքներ:

ԼՈՒՐԵՐ

Հայ-թրքական Սահմանը Պիտի Բանանը Առանց Նախապայմաններու. Սալահէլտին Տեմիրթաշ

Անգարայի «Hilton» հիւրանոցի մէջ կայացած է Թուրքիոյ քրտամէտ «Ժողովուրդներու դեմոկրատական կուսակցութեան» (ԺԴԿ-HDP) ժողովը, որու ընթացքին հրապարակուած է կուսակցութեան նախընտրական ծրագիրը: Այն կեանքի կը կոչուի, եթէ HDP-ն յաղթէ 24 յունիսին, Թուրքիոյ մէջ կայանալիք արտահերթ խորհրդարանական ընտրութիւններուն:

Վերոնշեալ ծրագրի հեղինակն է Սելահաթին Տեմիրթաշը, որ կը հանդիսանայ HDP-ի կողմէն առաջադրուած նախագահի թեկնածու: Ան այժմ բանտարկուած է:

Ծրագրի մէջ խօսուած են ինչպէս ներքին, այնպէս ալ արտաքին քաղաքականութեան մէջ իրականացուելիք քայլերու եւ փոփոխութիւններու մասին:

Արտաքին քաղաքականութեան վերաբերեալ հատուածին մէջ կը խօսուի նաեւ հայ-թրքական յարաբերութիւններու հեռանկարի մասին:

«Հայաստանի նկատմամբ կիրառուող տնտեսական արգելքը (էմբարկո) պիտի վերացուի, տնտեսա-



ԺԴԿ նախագահի թեկնածու Սելահաթին Տեմիրթաշ

կան ոլորտի մէջ պիտի իրականացուին անհրաժեշտ քայլեր, պիտի զարգացուին քաղաքական եւ դիւանագիտական յարաբերութիւնները: Թուրքիոյ կողմէն միակողմանի փակուած հայ-թրքական սահմանը պիտի բանանք առանց նախապայմաններու: Պիտի աջակցինք Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգաւորմանը միտուած ջանքերուն», - ըսուած է ծրագրի մէջ:

Թուրքիոյ Խորհրդարանը Մերժած է Հայոց Ցեղասպանութեան Մասին Բանաձեւը

Թուրքիոյ խորհրդարանի նախագահութիւնը մերժած է ընդդիմադիր քրտամէտ «Ժողովուրդներու դեմոկրատական կուսակցութիւնը» (HDP-ԺԴԿ) ներկայացնող պոլսահայ պատգամաւոր Կարօ Փայլանի՝ Հայոց ցեղասպանութեան մասին բանաձեւը:

«Իրմենիհայեր»-ի փոխանցմամբ, օրէնքի նախագիծի մերժման մասին Փայլանին գրաւոր տեղեկացուցած է խորհրդարանի նախագահ Իսմայիլ Քահրամանը՝ որպէս մերժման հիմնաւորում նշելով, որ Փայլանի ներկայացուցած օրէնքի նախագիծը կը պարունակէ «կոպիտ եւ վիրաւորական խօսք»:

Ըստ Քահրամանի՝ օրէնքի նախագիծի անուանման եւ բնաբանի մէջ առկայ են մեղադրանքներ Թուրքիոյ Հանրապետութեան եւ Թուրք ազգի պատմութեան եւ ազգի նկատմամբ, մասնաւորապէս, Թուրք ազգը կը մեղադրուի ցեղասպանութիւն գործելու մէջ: Քահրամանը ընդգծած է, որ նման արտայայտութիւնները վիրաւորանք են երկրի հանդէպ եւ կը հակասեն ազգային գիտակցութեան ու պատմութեան:

Ազգային ժողովի նախագահը աւելցուցած է, որ նախագիծը վե-

րադարձուած է պատգամաւորին անհրաժեշտ ուղղումներ կատարելու համար:

Փայլանը 20 Ապրիլ 2018-ին Թուրքիոյ խորհրդարանին ներկայացուցած էր, «1915 եւ անկէ յետոյ տեղի ունեցածը ցեղասպանութիւն ճանչնալու, մեղաւորներու անունները հասարակական վայրերէն հանելու եւ տուժողներուն Թուրքիոյ քաղաքացիութիւն շնորհելու» մասին օրէնքի նախագիծը:

Միւս կողմէ, Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայյպ էրտողանը յայտարարած է, որ Թուրքիան բացած է «1915 թուականի դէպքերու» վերաբերեալ առկայ բոլոր ռազմական արխիւները, գրած է թրքական «Հայեր Թուրք» կայքը:

էրտողանը կրկին պնդած է, թէ Թուրքիան «ցեղասպանական անցեալ չունի»:

«Թուրքիոյ պատմութեան մէջ հայերու հանդէպ ցեղասպանութիւն չէ եղած: Այսպէս կոչուած՝ Հայոց ցեղասպանութեան մասին մեղադրանքներ առաջադրողներուն մշտապէս կոչ ըրած ենք. եթէ կ'ուզէք՝ եկէք, մենք կը բանանք մեր արխիւները, եթէ դուք ալ ունիք՝ դուք ալ բացէք ձերը», - յայտարարած է Թուրքիոյ նախագահը:

Կարօ Փայլանն ու Սելինա Տողանը Շնորհաւորած են Հայ Ժողովուրդը

Թուրքիոյ Ազգային մեծ ժողովի հայազգի պատգամաւորները շնորհաւորանքներ յղած են Հայաստանի համաժողովրդական շարժման յաղթանակի առիթով:

«Ժողովուրդներու դեմոկրատական կուսակցութեան» պատգամաւոր Կարօ Փայլանը Թուրքիոյ մէջ հետեւեալ գրառումը ըրած է. - «Հայաստանի ժողովուրդը յաղթեց ժողովրդավարութեան պայքարը: Կը շնորհաւորեմ: Հերթը մերն է»:

Ընդդիմադիր ժողովրդահասարակական կուսակցութիւնը ներ-

կայացնող հայազգի պատգամաւոր Սելինա Տողանն ալ իր թուիթերէն էջին վրայ գրած է. - «Հայաստանի մէջ տեղի ունեցող իրադարձութիւնները կը գրուին ժողովրդավարութեան համաշխարհային պատմութեան էջերուն վրայ: Փոփոխութիւններու եւ ժողովրդավարութեան պահանջին ոչ մէկ ուժ չի կրնար դիմակայել: Կը շնորհաւորեմ այս պահանջի համար պայքարի առաջնորդներու եւ ժողովուրդի յաղթանակը»:

Տողանը օգտագործած է «Կեցցէ՛ Հայաստան» հաշթեկը:

Փաշինեան. «Մեր Նպատակը Մեծ Հայրենադարձութիւնն է»



Վարչապետ Նիկոլ Փաշինեան Սոչիի Հայութեան կողմէ կ'արժանանայ խանդավառ ընդունելութեան

Վարչապետ Նիկոլ Փաշինեանը աշխատանքային այցով ժամանած էր Ռուսիա:

Սոչիի օդակայանէն Փաշինեան ուղեւորուած է Ատլերի Սուրբ Սարգիս եկեղեցի, ուր զինք դիմաւորած են Հայ Առաքելական եկեղեցւոյ Ռուսիոյ Հարաւային Հայոց թեմի առաջնորդ Մովսէս եպիսկոպոս Մովսիսեանը, Սուրբ Սարգիս եկեղեցւոյ հոգեւոր հայրերը, տեղի հայ համայնքի բազմաթիւ ներկայացուցիչներ: Անոնք ջերմօրէն ողջունած են Նիկոլ Փաշինեանը եւ մաղթած յաջողութիւններ Հայաստանի վարչապետի պաշտօնին գործունէութեան ընթացքին: Կառավարութեան ղեկավարը կատարած է մոմավառութիւն եւ ծաղիկներ դրած եկեղեցւոյ բակի խաչքարերու մօտ:

Դիմելով հայ համայնքի ներկայացուցիչներուն՝ Նիկոլ Փաշինեանը, մասնաւորապէս, յայտարարած է. - «Բոլորիդ ողջունում եմ եղբայրական Ռուսաստանի Սոչի քաղաքում եւ ցանկանում ասել, որ հպարտ եմ ձեզով: Ողջ քաղաքական մեր գործընթացի ընթացքում զգացել եմ ձեզինք իւրաքանչիւրի շունչը, աջակցութիւնը, եւ այս

յաղթանակը ձեզինք իւրաքանչիւրի յաղթանակն է, սրանից յետոյ հայ ժողովուրդը լինելու է յաղթող, հայ ժողովուրդն է վերջոյ վերադառնալու է իր հայրենիք»:

«Այսօր մեր երկրի, հայ ժողովուրդի հեղինակութիւնը բարձր է աւելի քան երբեք, եւ ստեղծուած են բոլոր պայմանները, որ մենք ապրենք ու երջանիկ լինենք մեր հայրենիքում: Ամենակարեւորը, որ ուզում եմ ասել. իսկապէս դուք այստեղ էիք, բայց իրականում երեւանում էիք՝ Հանրապետութեան հրապարակում, ձեզինք շատերը նաեւ ֆիզիքապէս, որովհետեւ ես այսօր այստեղ տեսայ բազմաթիւ մարդկանց, որոնց վերջին անգամ հանդիպել էի երեւանի Հանրապետութեան հրապարակում: Ուզում եմ ասել, որ երջանիկ եմ ձեր երջանիկ աչքերը տեսնելով, հպարտ եմ ձեր հպարտ աչքերը տեսնելով, ծառայում եմ ձեզինք իւրաքանչիւրին, եւ որեւէ մէկը չկասկածի, որ մեր պայքարն ամէն անգամ, ամէն օր, ամէն շաբաթ, ամէն տարի նոր յաղթանակներ է բերելու Հայաստանին, հայ ժողովուրդին եւ Արցախին», - յայտարարած է Հայաստանի վարչապետը:

Փութինի Զեռ Զանդիպուլը Շատ Արդիւնաւետ

Շարունակուած էջ 1-էն

միջազգային կազմակերպութիւններու մէջ, սկսած Միւսուրուած ազգերու կազմակերպութենէն, ուր Հայաստանը եւ Ռուսիան մշտապէս աջակցած են իրար, աւարտած մեր արածաշրջանային կազմակերպութիւններով ե՛ւ անվտանգութեան, ե՛ւ տնտեսական զարգացման ոլորտներու մէջ»:

Փաշինեանը շնորհակալութիւն յայտնաց ֆութինին եւ վստահեցուց, թէ հայ-ռուսական ռազմավարական յարաբերութիւնները իր իշխանութեան օրօք կ'ամրապնդուին. - «Շատ հաճելի է, որ վարչապետ նշանակուելուց տառաջիօրէն մի քանի օր անց հնարաւորութիւն ունեմ հանդիպել Ձեզ հետ, քանի որ, կարծում եմ, քննարկելու հարցեր կան: Բայց ինչ-որ բան էլ կայ, որ քննարկման կարիք չունիք Հայաստանի եւ Ռուսաստանի ռազմավարական, դաշնակցային յարաբերութիւններն են: Կարող եմ հաստատեցնել, որ այս հարցում Հայաստանում կայ կոնսենսուս (համաձայնութիւն): Որեւէ մէկը երբեք կասկածի տակ չի դրել եւ,

կարծում եմ, չի էլ դնի հայ-ռուսական յարաբերութիւններու ռազմավարական կարեւորութիւնը:

Հայաստանի վարչապետը Սոչիի մէջ հանդիպումներ ունեցած է նաեւ Եւրասիական տնտեսական յանձնաժողովի նախագահ, Հայաստանի նախկին վարչապետ Տիգրան Սարգսեանի, Պելյաուուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի, Ղրղզստանի նախագահ Սորոնբայ Ժենբեկովի, ԵԱՏՄ-ում դիտորդ-պետութեան կարգավիճակ Մոլտովայի նախագահ Իգոր Տոտոնի հետ:

Հայաստանի վարչապետը ելոյթ ունեցած է Եւրասիական խորհուրդի նիստին՝ ըսելով. - «Հայաստանում խաղաղ իշխանափոխութիւն է տեղի ունեցել, ինչի մասին, կարծում ենք, լաւ իրազեկուած էք: Մենք արդէն կառավարութիւն ենք ձեւաւորել, որի ծրագիրը կոնցրետաւ (մտապատկեր) առումով չի նախատեսելու արտաքին քաղաքականութեան ռեւերսներ (հակակողմ): Հաստատում եմ Հայաստանի միջազգային պարտաւորութիւնները կատարումը այդ թւում Եւրասիական տնտեսական միութիւնում»:

Քոնկրետի Յելսինքիի Յանձնաժողովը կը Պահանջէ Պատժել Պարուն՝ Մարդու Իրաւունքներու Շարունակական Խախտումներու Համար



Ժամանակն է, որ Արեւմուտքը պատժամիջոցներ սահմանէ Ատրպէյճանի իշխանութիւններու նկատմամբ՝ մարդու իրաւունքներու եւ ժողովրդավարութեան շարունակական ոտնահարման համար: Ընդհանուր առմամբ՝ այս էր ամերիկեան Քոնկրէտի Հելսինքիի յանձնաժողովի նախօրէին կազմակերպուած լսումներու հիմնական թեման:

Հեղինակաւոր այս յանձնաժողովը, որու կարծիքը ծանրակշիռ ազդեցութիւն ունի ԱՄՆ արտաքին քաղաքականութեան վրայ, հրաւիրած էր իրաւապաշտպաններ ու փորձագէտներ, պարզելու՝ առաջին հանրապետութեան հռչակումէն հարիւր տարի անց ի՞նչ վիճակի մէջ է ժողովրդավարութիւնը Ատրպէյճանի մէջ: Գնահատականը միանշանակ էր՝ Պարուն Հարաւային կողմասի վերջին վարչակազմն է, որ բռնազաւթած է իշխանութիւնը՝ համատարած կերպով ոտնահարելով մարդու իրաւունքները:

«Քաղաքական բանտարկեալներու, անոնց հարազատներու, ամէնօր բռնութեան ու ճնշումներու ենթարկուող ատրպէյճանցիներու անունով ես կը կը մեղադրեմ իհրամ Ալիեւը ընտրութիւնները կեղծելու, ընդդիմադիրներուն կտտանքներու ենթարկելու ու առեւանգելու համար», - յայտարարած է Մեյտան TV-ի տնօրէն Էմին Միլլին: «Բազմաթիւ ապացոյցներ կան, որ 2012-2014 թուականներուն օրական միջինը 3 միլիոն տղար հոսած է Ատրպէյճանէն դէպի Բրիտանիա, որպէսզի յետոյ ծախսուի Արեւմուտքի քաղաքական գործիչներուն, լրագրողներուն, փորձագիտական խումբերուն կաշառելու համար:

Եւ երբ կը խօսիք Ալիեւի մասին որպէս դաշնակիցի, պէտք է հասկանաք, որ անոր վարչակազմը յանցագործութիւն կը կատարէ ոչ միայն սեփական ժողովուրդի, այլև Միացեալ Նահանգներու ու Եւրոպայի դէմ», - աւելցուցած է Միլլին: «Արեւմուտքը միշտ կը կարծէ, որ Ալիեւի նմաններու հետ պէտք է առձակատման չերթալ, որ անոր կողմէն ընկալուած է որպէս թուլութեան նշան», - նաեւ փաստած է ընդդիմադիր լրագրողը, յայտարարելով՝ հիմա արդէն Արեւ-

մուտքը Ալիեւի հարցով պէտք է գործնականի անցնի:

«Ժամանակն է, որ Միացեալ Նահանգներու Քոնկրէտի մէջ եւս հետաքննութիւն իրականացուի, պարզելու՝ արդե՞ք Ալիեւի վարչակազմը չէ կաշառած ամերիկացի քաղաքական գործիչները, լրագրողները ու փորձագէտները: Ամերիկայի երկու նախկին դեսպաններ այժմ աշխատավարձ կը ստանան Ալիեւի վարչակազմէն, այս ամօթ է, եթէ ես ամերիկացի ըլլայի, կ'ամճնայի», - ըսած է Մեյտան TV-ի տնօրէնը:

«Արեւմուտքի մէջ ոմանք յայտարարած են, թէ Ատրպէյճանը կարելոր դաշնակից է: Մակայն, որպէս պատմաբան, ես կը պնդեմ՝ իրականութեան մէջ ճիշդ հակառակն է», - ըսած է Մասաչուսեթսի համալսարանի դասախօս Օտրի Աշտադտը, փաստելով՝ 20-րդ դարու զարգացումները ցոյց տուին, որ այն վարչակազմերը, որոնք կ'ոտնահարեն մարդու հիմնարար իրաւունքները, չեն կրնար վստահելի գործընկերներ ըլլալ: «Ժամանակն է իրերը կոչել իրենց անուններով», - իր հերթին յայտարարած է իրաւապաշտպան, Freedom Now կազմակերպութեան ղեկավար Մարան Թորներն ու աւելցուցած զ

«Ատրպէյճանի իշխանութիւնը տարեցտարի աւելի կը կոշտացնէ իր բռնապետական կառավարումը: Ժամանակն է անուններ տալ եւ պատժել: Խօսքը ոչ թէ Ատրպէյճանի մասին է, այլ կառավարութեան անդամներու, որոնք կ'ոտնահարեն մարդու իրաւունքները՝ նախարարներու, դատախազներու, դատաւորներու, ոստիկաններու: Ժամանակն է պատասխանատուութեան ենթարկել զանոնք»:

Աւելի շուտ հեղինակաւոր այս յանձնաժողովը խստօրէն քննադատած էր Ատրպէյճանի մէջ իրականացուած նախագահական ընտրութիւնները, փաստելով՝ քուէարկութիւնը անցած է ազատ ընտրութեան եւ անկախ մամուլի բացակայութեան պայմաններու մէջ: Յանձնաժողովի համանախագահ, հանրապետական Քրիս Սմիթն ալ անցնող տարի շրջանառութեան մէջ դրած էր Ալիեւի վարչակազմի դէմ պատժամիջոցներ սահմանող օրինագիծ մը, որ արդէն ԱՄՆ Քոնկրէտի օրակարգի վրայ է:

Հայ-Ատրպէյճանական Սահմանը Հատած Պանկլատչի 6 Քաղաքացիներ Կալանաւորուած են



Մայիս 8, 2018ին ՀՀ պաշտպանութեան նախարարութեան կողմէն հաղորդագրութիւն տարածուած էր, որ հայ-ատրպէյճանական սահմանը հատելու ժամանակ ձերբակալուած են Պանկլատչի 6 քաղաքացիներ, որոնք յանձնուած են Ազգային անվտանգութեան ծառայութեան:

ՀՀ վարչապետին առընթեր ազգային անվտանգութեան ծառայութեան քննչական վարչութեան մէջ դէպքի առթիւ յարուցուած քրէական գործով ձեռք բերուած նախնական տուեալներու համաձայն՝ 8 Մայիսի 2018 թուականի՝ կէսգիշերը անց, Պանկլատչի

ժողովրդական Հանրապետութեան 6 քաղաքացիներ ՀՀ ՊՆ զօրամասի մարտական դիրքի հարակից հատուածով հատած են հայ-ատրպէյճանական (Նախիջևան) սահմանը, որմէ յետոյ բռնուած են հերթապահութիւն իրականացնող ՀՀ ՊՆ զինծառայողներու կողմէ:

Նշուած անձինք ցուցմունքներ տալով յայտարարած են, որ աշխատանք գտնելու նպատակով մտադրութիւն ունեցած են Պարսկաստանի տարածքով անցնիլ Թուրքիա, սակայն մոլորուելով պատահաբար յայտնուած են Հայաստան:

Լրագրող Արիս Նալճըի Հետ

Շարունակուած էր 1-էն

Թեան եւ յաղթանակի արձագանքներուն մասին՝ Նիկոլ Փաշինեանի նոր վարչապետ ընտրուելուն առիթով: Հայ ժողովուրդի պատմութեան մէջ նոր էջ մը կը բացուի պայծառ ապագայի մը հեռանկարով:

Լենա Մանուկեան ներկայացուց Արիս Նալճըի կենսագրական գիծերը: Ան եղած է տարիներու «Ակօս» հայկական Շաբաթաթերթի խմբագիր, խորհրդակցութիւններ կատարած է եւ կառավարած է տասնեակ մը ծրագրեր՝ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ, ինչպէս թուրք-հայկական երկխօսութիւնը: Ան մասնակցած է գիտաժողովներու՝ Հայ եւ Թուրք յարաբերութիւններու մասին, Թուրքիոյ եւ Հայաստանի մէջ:

Արիս Նալճըի կարեւոր աշխատանքներէն մին եղած է ՄԴՀԿ-ի Քսան կախաղաններու գիրքի թարգմանութիւնը հայերենէ-թրքերէնի:

Արիս Նալճըն տեղեկացուց որ գործակցած է Թուրք յառաջդիմական մտաւորական Գատիր Ազրնի հետ: Միասնաբար պրպտած են թրքական արխիւները եւ այդ ժամանակաշրջանի հրատարակութիւնները, հարցազրոյցները եւ Թուրք պատմաբաններու գրութիւնները:

Ան յայտնեց որ, Փարամազի նուիրուած թրքերէն լեզուով հատորը առաջին անգամ հրատարակ հանուեցաւ հինգ տարի առաջ, գիրքի մեծ տօնավաճառի մը ընթացքին: Այնուհետեւ նոյն գիրքը



Ելոյթ կ'ունենայ Արիս Նալճը

արժանացաւ Հորս հրատարակութեան՝ Ervensel հրատարակչատունէն, որ յետոյ փակուեցաւ պետութեան կողմէ:

Արիս Նալճը իր ելոյթով անդրադարձաւ հայ-թուրք յարաբերութիւններու, թրքահայերու եւ Թուրքիոյ մէջ տիրող իրադարձութիւններուն մասին:

Ապա ան պատասխանեց ներկաներու բազմաթիւ հարցումներուն:

Փակման խօսքով բեմ հրաւիրուեցաւ Փարամազ մասնաճիւղի ատենապետ Ընկ. Տիրան ձէրէճեան: Ան շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն եւ օրուայ բանախօսին, գնահատելով անոր ելոյթը եւ ներդրումը հայ-թուրք յարաբերութիւններու ծիրէն ներս:

Ներկաները մեծ գոհու-նակութեամբ շնորհակալութիւն յայտնեցին այս յատուկ ձեռնարկի պատրաստութեան եւ կազմակերպութեան համար եւ լրագրող Արիս Նալճըին:

SYRIAN ARMENIAN RELIEF FUND logo with text: Save Support Sustain, P.O. Box 1948, Glendale, CA 91209-1948, www.syrianarmenianrelieffund.org

Reuters. Սերժ Սարգսեանի Հրաժարականին Նախորդող 24 Ժամերուն Քննարկուած Է Արտակարգ Դրութեան Հնարաւորութիւնը



«Սերժ Սարգսեանի հրաժարականին նախորդող օրերուն ոռու բարձրաստիճան պաշտօնեաները հեռախօսային բանակցութիւններ վարած են թէ՛ բողոքի գործողութիւններու ղեկավարներու եւ թէ՛ Հայաստանի իշխող վերնախաւի ներկայացուցիչներու հետ», - պնդած է «Reuters» գործակալութիւնը՝ քաղաքական եւ դիւանագիտական շրջանակները ներկայացնող առնուազն երեք աղբիւրներ վկայակոչելով:

«Reuters»-ի թղթակից Մարգարիտա Անթիճէն, որ, հայաստանեան իրադարձութիւններու ընթացքին երեւան կը գտնուէր, փորձած է մանրամասներ պարզել Հայաստանի իշխանական շրջանակներու մէջ 22 եւ 23 Ապրիլին ծաւալած քննարկումներու եւ այդ օրերու յուզիչ իրադարձութիւններու վրայ Ռուսիոյ ունեցած ազդեցութեան մասին:

«Reuters»-ի թղթակիցի բնորոշմամբ, ի տարբերութիւն 2014 թուականի ուքրանական իրադարձութիւններու, Հայաստանի մէջ Մոսկուան գերադասեց աւելի զուսպ մօտեցում ցուցաբերել՝ «չպաշտպանելով իշխանութիւնները՝ բողոքի ցոյցերուն մասնակիցներու դէմ ուժ կիրառելու իրաւունքը»:

Բողոքի ցոյցերու ընթացքին Նիկոլ Փաշինեանը գրոյց ունեցած է Ռուսիոյ դեսպանատան, ինչպէս նաեւ Ռուսիոյ արտաքին գործերու նախարարութեան պաշտօնեաներէն մէկուն հետ: «Reuters»-ի պնդմամբ, այս փաստը հաստատած է բողոքի գործողութիւններու առաջնորդներէն մէկը՝ Արմէն Գրիգորեանը:

«Reuters»-ի թղթակցին նոյնատիպ տեղեկութիւն հաղորդած է նաեւ Փաշինեանի մերձաւոր շրջապատը ներկայացնող մի գործա-

րար, սակայն, չէ ցանկացած, որ իր անունը հրապարակուի:

Այդ նոյն օրերուն, ըստ «Reuters»-ի, հայաստանեան իշխանութիւնները եւս պաշտօնական Մոսկուայի հետ որոշակի շփումներու մէջ եղած են. - «Դիւանագիտական աղբիւր մը, որ չէ հրապարակած իր անունը, պնդած է, որ Սերժ Սարգսեան իր հրաժարականին նախորդած 24 ժամերու ընթացքին հեռախօսագրոյցներ ունեցած է Մոսկուայէն պաշտօնեաներու հետ»: Անոնց բովանդակութիւնը, սակայն, գործակալութեան գրուցակիցը չէ բացայայտած:

«Ռուսիոյ արտաքին գործերու նախարարութիւնը մեր հարցումին՝ արդեօք երեւանի մէջ գտնուող անձանց հետ ճգնաժամի ընթացքին շփումներ եղա՞ծ են, թէ՛ ոչ, չէ արձագանգած», - նշած է «Reuters»-ի յօդուածագիրը՝ աւելցնելով. - «Ռուսիոյ ազդեցութիւնը հայկական յեղափոխութեան ընթացքին արձանագրուած միակ գործօնը չէր: Սերժ Սարգսեանի թոյլ տուած սխալները եւ բողոքի գործողութիւններու ներուժն էին, որ որոշիչ նշանակութիւն ունեցան»:

«Reuters»-ը որեւէ ապացոյց չէ յայտնաբերած, որ կը վկայէր հայաստանեան իրադարձութիւններուն Ռուսիոյ միջամտութեան մասին: Իրականին մէջ, Մոսկուայի չմիջամտելու այդ որոշումը բաւարար էր, որպէսզի ուժերու յարաբերակցութիւնը թեքուի յօգուտ ցուցարարներու», - ըսուած է «Reuters»-ի հրապարակման մէջ:

Գործակալութեան թղթակիցը նաեւ յաջողած է որոշ մանրամասներ պարզել 22 ապրիլին կայացած Սերժ Սարգսեան-Նիկոլ Փաշինեան հանդիպման եւ յաջորդ օրը տեղի ունեցած զարգացումներու մասին:

Վարչապետ Փաշինեանը Ընդունած Է Վնասուածք Ստացած Ցուցարարը



Վարչապետ Նիկոլ Փաշինեան հիւրընկալած է պարսկահայ 18-ամեայ Իլէն Ռոստամին, որ 16 Ապրիլին Բաղրամեան պողոտայի վրայ ոստիկաններու կողմէ կիրառած յատուկ միջոցի հետեւանքով դէմքի լուրջ վնասուածք ստացած էր:

Ռոստամին վիրահատման համար Պարսկաստան մեկնած էր, իսկ վերադառնալէ ետք շարունակած էր մասնակցիլ Փաշինեանի առաջնորդած ցոյցերուն ու քաղաքացիական անհնազանդութեան գործողութիւններուն:

«Ազատութեան» հետ գրոյցի ընթացքին Իլէն ըսած էր, որ համաժողովրդական շարժման յաղթանակէն ետք մէկ ցանկութիւն ունի՝ տեսնել վարչապետ Նիկոլ

Փաշինեանը ու անոր հետ նկարուել. «Էսի ուղղակի անակնկալ էր, ընդհանրապէս չէի սպասում: Էն էլ էս օրերին, որ նոր է ամէն ինչ, ընդհանրապէս չէի պատկերացնում: Անակնկալ էր: Շատ զարմացայ, որովհետեւ գիտեմ իրա 2-3-րդ օրն է: Չէի մտածում, որ հոգեան գործերի մէջ կը թողնի, որ հանդիպեմ իր հետ»:

18-ամեայ աղջիկը եւս մէկ անգամ պէտք է վիրահատման ենթարկուի: Աւելի վաղ «Ազատութեան» ըսած էր՝ յաղթանակէն ետք չի մտածեր ալ, թէ դէմքը այլեւս նախկինը չէ եւ սպին պիտի յիշեցնէ 16 ապրիլի դէպքերը: Ըսած է՝ Հայաստանը դէպի լաւ փոխելու համար միշտ պայքարելու պատրաստ է:

րու մասին:

«Այդ 24 ժամերու ընթացքին Սերժ Սարգսեանը աշխոյժ քննարկումներ ունեցած է իր խմբակի ու պաշտօնեաներու հետ: Անոնք քննարկած են երկրի արտակարգ դրութիւն հաստատելու հնարաւորութիւնը, որ ուժային կառուցներուն ցուցարարներու դէմ պայքարի աւելի լայն լիազօրութիւններ կ'ընձեռէր», - նշած է «Reuters»-

ի յօդուածագիրը՝ մէջբերելով Ազգային ժողովի փոխ խօսնակ Էստուար Շարմազանովի խօսքերը. - «Մենք երկու տարբերակ ունէինք՝ կամ խորհրդարանը արտակարգ դրութիւն պիտի յայտարարէր, կամ ալ Սերժ Սարգսեանը հրաժարական պիտի տար: Արտակարգ դրութեան հաստատումը, սակայն, ոչ թէ խնդրի լուծում կ'ըլլար, այլ՝ յետաձգում»:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՈԳԻ ԸԱՄԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ԸԵՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

LIFE INSURANCE INDIVIDUAL & GROUP HEALTH INSURANCE LONG TERM CARE MEDICARE DENTAL & VISION DISABILITY



M MARONIAN
INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served our community's insurance needs.

Call us today!

Bedros & Siamanto
805 EAST BROADWAY, GLENDALE, CA 91205

CA Insurance Lic. #0494056 / #0C99815
MARONIANINSURANCE.COM

(818) 500 9585
(818) 269 0909

Թուրքիայի Անսպասելի Պատասխանը Հայաստանի Նոր Վարչապետին

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԵԱՆ

Թուրքիայի վարչապետ Բենալիմ Յըլդըրըմը նախօրեին անսպասելի է հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի յայտարարութեանը, որ նա արել էր Ստեփանակերտ այցի եւ մամուլի ասուլիսի ընթացքում, խօսելով հայ-թուրքական յարաբերութեան մասին: Նիկոլ Փաշինեանն ասել էր, որ Թուրքիայի հետ յարաբերութեան բացակայութեան պատճառը Հայաստանը չէ եւ Հայաստանը միշտ պատրաստ է առանց նախապայմանի բարելաւել եւ կարգաւորել յարաբերութիւնը:

Երեւանի այդ դիրքորոշումը նոր չէ եւ Նիկոլ Փաշինեանը փաստացի վերահաստատում է Հայաստանի այդ մտնեցման շարունակութիւնը իր պաշտօնավարման շրջանում:

«Իհարկէ եթէ Հայաստանը փոխի տարիներ ի վեր Թուրքիայի հանդէպ ունեցած թշնամական դիրքորոշումը, հրաժարուի Թուրքիայի տարածքային ամբողջականութեան ու սահմանների նկատմամբ ունեցած նկրտումներից, ամէն ինչից հրաժարուի, ցանկանայ նոր էջ բացել, ապա մենք կ'ուսումնասիրենք մանրամասներն ու դրան անհրաժեշտ պատասխան կը տանք: Մենք ոչ ոքի, մասնաւորապէս մեր հարեւանների հետ չենք ցանկանում թշնամութեան մէջ լինել: Եթէ այսպիսի մտնեցում լինի, կը քննարկենք այն մեր պետութեան շահերի շրջանակում», յայտարարել է Թուրքիայի վարչապետ Յըլդըրըմը:

Նրա յայտարարութիւնն իհարկէ հակասական է: Մի կողմից նա փորձում է յարաբերութեան բացակայութեան, Թուրքիայի վերաբերմունքի պատասխանատուութիւնը դնել Հայաստանի վրայ, ինչն անշուշտ այդպէս չէ, միւս կողմից սակայն նրա յայտարարութեան մէջ նկատելի է մի էական հանգամանք:

Թուրքիայի վարչապետը խօսում է Թուրքիայի տրածքային ամբողջութեան եւ սահմանների մասով Հայաստանի վերապահումների մասին, ինչը հասկանալիօրէն առնչուում է ցեղասպանութեան ճանաչման խնդրին, պահանջատիրութեանը, Թուրքիայի սահմանները չճանաչելուն:

Իհարկէ այստեղ Յըլդըրըմը նենգափոխում է իրողութիւնները, քանի որ Հայաստանը Թուրքիայի նկատմամբ չի ներկայացրել որեւէ տարածքային պահանջ եւ նոյնիսկ հայտարարել է, որ չունի այդպիսի մտադրութիւն եւ իրաւական հիմք: Միւս կողմից, սակայն, Անկարան իհարկէ լաւ է հասկանում հայկական հարցի նրբութիւնն ու խորութիւնը, ըստ այդմ աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխութեան պայմաններում նաեւ այդ մասով իրավիճակի փոփոխութեան հնարաւորութիւնը: Առաւել էս, որ Հայաստանը չի ճանաչել Թուրքիայի ներկայիս սահմանը:

Միւս կողմից, Հայաստանը պատրաստում էր անել դա հայ-թուրքական ֆուտպոլային դիւանագիտութեան գործընթացում, եթէ Թուրքիան գնար մինչեւ վերջ եւ կարգաւորէր յարաբերութիւնն ու բացեր հայ-թուրքական սահմանը: Սահմանների փոխադարձ ճանաչումը առկայ էր արձանագրութիւններում: Բայց Անկարան դնում

էր Արցախի նախապայմանը՝ Ատրպէյճանի յայտնի պահանջների կատարում:

Յըլդըրըմի ներկայիս յայտարարութիւնը խիստ ուշագրաւ է այդ համատեքստում: Նա կարծես թէ չի խօսում Արցախի հարցում նախապայմանի մասին, չի ասում, որ Թուրքիան կը կարգաւորի Հայաստանի հետ յարաբերութիւնը, եթէ Հայաստանը զիջման գնայ Արցախի խնդրում:

Բաւարար է Յըլդըրըմի մէկ յայտարարութիւնը եզրակացնելու համար, որ այստեղ կայ փոփոխութիւն եւ կարեւոր փոփոխութիւն: Թէ՞ պէտք է սպասել, թէ ինչ կարծիքի է «սուլթանը»՝ նախագահի արտահերթ ընտրութիւն նշանակած եւ դրան գնացող էրդողանը, որի խօսքն է վերջինն ու կարեւորը:

Միւս կողմից, արդեօք Թուրքիան չենց այդ պատճառով չի կարող յամենայն դէպս դրական ազդակներ թողնել հայ-թուրքական կարգաւորման ուղղութեամբ, փորձելով իմիտացնել քաղաքանութեան փոփոխութիւն եւ դա խաղարկել միջազգային կեդրոնների, Արեւմուտքի հետ յարաբերութիւնում՝ որպէս արտահերթ ընտրութեան գործընթացում միջազգային քիչ թէ շատ դրական տրամադրուածութիւն ապահովելու քայլ:

Ի վերջոյ, հայկական հարցը աւելի ու աւելի հնչեղ տեղ է զբաղեցնում Թուրքիային ներկայացուող պահանջներում: Չի բացառուում նաեւ, որ Անկարան այդպիսով փորձում է խաղալ Ռուսաստանի հետ, որի համար եւս հայ-թուրքական թեման խիստ զգալուն է, եւ յարաբերութեան կարգաւորումն ու սահմանների բացումը կարող է ունենալ ինչպէս դրական, այդպէս էլ ռիսկային քաղաքական ու տնտեսական հեռանկարներ:

Իհարկէ այլ հարց է, թէ արդեօք միայն Արցախի խնդրի նախապայմանից հրաժարուելը ենթադրում է առանց նախապայմանի յարաբերութիւն, որովհետեւ Յըլդըրըմը փաստօրէն դնում է հայկական հարցից հրաժարուելու նախապայման, ինչը Հայաստանի համար կը լինի լրջագոյն քաղաքական սխալ:

Անշուշտ վաղ է Յըլդըրըմի յայտարարութիւնից անել հեռուն գնացող հետեւութիւն, սակայն այդ իմաստով ուշագրաւ է Սերժ Սարգսեանի յայտարարութիւնը Միւնխենի անվտանգութեան վեհաժողովում ունեցած ելույթում: Յայտարարելով հայ-թուրքական արձանագրութիւնները չեղարկելու որոշման մասին, Սարգսեանը նաեւ յայտարարեց, որ նոր պայմաններում պէտք է բանակցուի արդէն նոր բովանդակութեամբ փաստաթուղթ:

Իսկ պայմաններն արդէն նոր են ոչ միայն արագ փոփոխող աշխարհաքաղաքականութեան, այլ նաեւ անմիջապէս Հայաստանի իրավիճակի մասով: Երեւանը ներկայում համաշխարհային նիւզմէյքթեր է եւ բարեբախտաբար ոչ թէ պատերազմի կամ ֆուտպոլային հին բովանդակութեան, այլ երկրում համաժողովրդական վերափոխումների բացառիկ բնոյթի շնորհիւ: Պատրաստ է Թուրքիան այդ պայմաններում Հայաստանի հետ նոր բանակցութեան եւ «նիւզմէյքթերական» այդ բացառիկ դրական առիթից նաեւ իր օգտուելուն:

Հայաստանը Կարող է Յեղափոխութիւն Արտահանող Երկիր Դառնալ

ԿԱՐՊԻՍ ՓԱՇՈՅԵԱՆ

Յետխորհրդային տարածքում, կարծես թէ, յեղափոխական հուժկու ալիք է կանխատեսուում: Ճիշտ է, ԽՍՀՄ նախկին հանրապետութիւնների մի զգալի մասը վերջին տասնամեակներին արդէն իսկ անցել են տարատեսակ յեղափոխական ցնցումների միջով, բայց սա մի նոր շրջափուլ է, որի մեկնարկը Հայկական յեղափոխութիւնն է: Այլ խօսքով ասած՝ Հայաստանը ունենալու է ստարտային այն կարգավիճակը, որը ստանձնեց Թուրքիայը Արաբական գարնան ժամանակ:

Ուշագրաւն այն է, որ Հայաստանում արձանագրուած յեղափոխութիւնը ոչ միայն ստարտային նշանակութիւն է ունենալու, այլ նաեւ զաղափարական ու կիրառական տեսանկիւններից ներազդելու է ցանկացած գործընթացի վրայ՝ Տաշքենդից մինչեւ Քիշնեւ:

Թերեւս հայկական յեղափոխութեան ամենակարեւոր ուղղորձը տարածաշրջանի երկրներին այն է, որ յեղափոխութեան իրականացնելու համար ամէնեւին էլ պարտադիր չէ կազմաքանդել ու ոչնչացնել պետական, քաղաքական ու հանրային ինստիտուտները: Ընդհակառակը՝ հնարաւոր է առանց բռնութեան ու արեան հասնել ցանկալի արդիւնքի՝ հնից պահպանելով ամենակարեւորն ու միաժամանակ ստեղծելով նորը:

Ասուածի համատեքստում յեղափոխական որոշակի տրամադրութիւններ են նկատուում հարեւան վրաստանում: Անշուշտ ալիքը կարող է տարածուել նաեւ Ուքրաինայում, Բելառուսում, Ատրպէյճանում, Ռուսաստանում եւ Միջին Ասիայում: Նշուած գրեթէ բոլոր երկրներում էլ քողարկուած կերպով յեղափոխական տրամադրութիւններ կան, որոնք խեղդուած են ու սաղմնային վիճակում արգելափակուած: Ինչպէս-որ ժամանակին Հայաստանում: Բայց ցանկացած կայծի դէպքում հնարաւոր է եւ մեծ պայթիւն արձանագրուի, որի հետեւանքներն անկախատեսելի են:

Իհարկէ չափազանցութիւն կը լինի, եթէ նշենք, որ յեղափոխական տրամադրութիւնների արտահանողը հենց Հայաստանն է: Նման յաւակնութիւններ փոքրիկ Հայաստանը դեռեւս չի կարող ունենալ:

Բայց մի բան յստակ է. ներհայկական իրադարձութիւնները ոգեւորիչ ներգործութիւն են թողել ամբողջ տարածաշրջանում: Ասուածից չի կարելի ենթադրել, որ եթէ հիմա չունի, ապա յետագայում էլ չի կարողանալու ունենալ այդպիսի յաւակնութիւններ: Պէտք է արձանագրել, որ վերջին 600-700 տարիների ընթացքում Հայաստանն առաջին անգամ արժէք է արտադրել ու հիմա էլ պէտք է փորձի արտահանել հարեւան երկրներ: Երեւի թէ չի լուծւում էք, թէ ինչպէս էին Ռուսաստանի տարբեր քաղաքներում հանրահաւաքներին մասնակցող ակտիւիստները վանկարկում են ռուսերէնով «Մենք ուզում ենք, ինչպէս Հայաստանում»:

Ընդհանրապէս յեղափոխական աւանդոյթներ ունեցող երկրներից բոլորը վախենում են, քանի որ յեղափոխութիւնը դանդաղ տարածւելու, իսլամի պէս աստիճանաբար ներծծուելու ու միանգամից պայթելու յատկութիւն ունի: Սա շատ լուրջ գէնք կարող է դառնալ Հայաստանի ձեռքին եւ նոյնիսկ կարելի է կիրառել մեր նկատմամբ թշնամական վերաբերմունք ունեցող պետութիւնների դէմ: Կարելի է յեղափոխութիւնն արտահանել Ատրպէյճան, Թուրքիա, ինչու չէ նաեւ Իրան ու Ռուսաստան: Ի՞նչ կը լինի որ, զբաղուենք յեղափոխութեան էքսպորտով: Բայց մի մտավախութիւն կայ. վերոյիշեալ բոլոր երկրները կարող են «սրբազան» դաշինք կնքել ու յեղափոխական որջը արմատախիլ անելու փորձեր ձեռնարկեն:

Հայաստանի շահերից է բխում, որ յեղափոխական ցնցումներ սաղմնաւորուեն առաջին հերթին հարեւան Ատրպէյճանում, բայց ոչ թէ երկիրն այդ կազմաքանդելու եւ թուլացնելու նպատակով, այլ ատրպէյճանցի ժողովրդին բռնապետութեան ճիրաններից ազատագրելու եւ ժողովրդավարական ուժերի իշխանութեան գալու բանական ակնկալիքներով: Ատրպէյճանի կազմաքանդումը մեզ որեւէ օգուտ չի տայ, ընդհակառակը՝ հնարաւոր է եւ մեծագոյն վնաս պատճառի, յատկապէս այն դէպքում, երբ Իրանի միջամտութեամբ իշխանութեան գան իսլամիստներն ու իմամները:

«ՀՐԱՊԱՐԱԿ»

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
 Enclosed a check for (one year)
 * \$50,00 * \$100,00 (first class) for USA
 \$ 125,00 (Air Mail) for Canada.
 \$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
 Address: -----
 City: ----- State: ----- Zip Code: -----
 Country: -----
 Tel: ----- Email: -----

Պոլսահայ Միութեան Հրապարակային Հարցազրոյցը Նուիրուած Հայաստանի Առաջին Հանրապետութեան 100-Ամեակին



«Ազգի Ներկան ու Ապագան» խորագիրը կրող հետաքրքրական հրապարակային հարցազրոյց-ասուլիս մը տեղի ունեցաւ անցեալ Չորեքշաբթի 9 Մայիս, 2018, Պոլսահայ Միութեան կեդրոնին մէջ-Ուինեսթը:

Հայաստանի առաջին հանրապետութեան հաստատման 100-ամեակին առիթով կայացած սոցն միջոցառումի նախաձեռնարկ պոլսահայ Միութեան մշակութային յանձնախումբի ատենապետ Տօքթ. Յովհաննէս Գուլաք-Աւետիքեան, իր բացման խօսքին մէջ ողջունեց հայ գաղութի տարբեր կազմակերպութիւնները՝ ներկայացնող ընտրանի հասարակութիւնը: Այնուհետեւ անդրադարձաւ օրուան նիւթին կարեւորութեան եւ հանրութիւնը յուզող հիմնահարցերուն: Ապա մէկ առ մէկ ներկայացուց ասուլիսի մասնակիցները, միաժամանակ տալով անոնց հակիրճ կենսագրութիւնները:

Կրթական նախարարին այս հրահանգը ցայտուն վկայութիւն մը՝ կասկածներէ հեռու ապացոյց մըն է, որ հայութեան դէմ թուրք անհատներէն առնուած «երդուեալ վկայութիւն»-ները ի՞նչ ձեւով եւ ի՞նչ պայմաններու տակ առնուած էին:

Կ. Պոլսոյ «Ճումհուրիյէթ» օրաթերթի յօդուածագիրներէն Օրալ Չալըշլար (Oral Calislar), նոյն օրերուն, ցեղասպանութիւնը մերժողներուն, իթթիհատականները պաշտպանողներուն առ ի պատասխան՝ ի մէջ այլոց կը գրէ. «Կարելի չէ կռուիլ ճշմարտութիւններու հետ: Ինչ որ պատահած է, պատահած է:

Գերմանները կրնան Հիթլերը պաշտպանել «անիկա գերմանացի է» ըսելով: Իթթիհատականները մարդկութեան դէմ յանցանք գործեցին, եւ ինչո՞ւ անոնց յանցանքը իւրացնեմ եւ «իբրեւ թէ» մը աւելցնեմ բառերուն առջեւ»:

Վերեւ ներկայացուած խեղաթիւրումները, ժխտումները

Թուրքերու կառավարութիւններուն իրենց այլազան երկիրներու դեսպաններուն միջոցաւ ի նպաստ իրենց հասարակական կարծիք մը ձեւաւորելու՝ «գուցէ 1915-ի դէպքը ցեղասպանութիւն չէր», աշխատանքներէն օրինակներ են:

Ըստ նշանաւոր ցեղասպանագէտներ Israel W. Charney-ի, Robert Jay Lifton-ի, Roger Smith-ի, Eric Markusen-ի, Deborah E. Lipstadt-ի եւ ուրիշներու, «հերքումը ցեղասպանութեան վերջին փուլն է»: Թուրքիա ոչ միայն ցեղասպանութիւնը կը հերքէ, կը ժխտէ, այլ հայոց մշակութային կոթողները՝ հայուն այդ հողերուն վրայ գոյութեան փաստերը՝ եկեղեցի, վանք, դպրոց, խաչքար, գերեզմանոց, կ'ոչնչացնէ:

1986-ին Նոպելեան մրցանակի արժանացած քաղաքական գծիչ, հոլոքոստի վերապրեալ, 57 գիրքերու հեղինակ Փրոֆ. Elie (Eliezer) Wiesel կ'ըսէ. «Թրքական ժխտողականութիւնը կրկնակի սպանու-

թիւն է, քանի որ ան կը ջանայ մեռցնել՝ մոռացութեան մատնել դէպքին յիշողութիւնը»:

Թուրքերու կառավարութիւններուն այս ժխտողական քաղաքականութեան հակառակ՝ թրքական կեղծարարութիւնները բացատրելու, ճշմարտութիւնը համաշխարհային հանրութեան հասցնելու համար, Սփիւռքի Հայ Դատի կազմակերպութիւնները, սփիւռքահայ եւ Մայր Հայրենիքի ցեղասպանագէտ պատմաբանները լծուած են երկարատեւ պայքարի մը: Այս աշխատանքին իրենց յօժար մասնակցութիւնը կը բերեն նաեւ թուրքիա կամ այլուր ապրող թուրք պատմաբաններ, որոնք համոզուած են, թէ թուրքիա առանց իր անցեալին հետ առեւտուելու՝ Հայոց ցեղասպանութիւնը ճանչնալու, չի կրնար ժողովրդավար կարգերով դեկավարուող երկիր մը դառնալ:

Ցեղասպանութիւնը չճանչցող եւ այդ ցեղասպանութեան գործադրման մէջ իրենց գործօն մասնակցութիւնը բերած անձերու կողմէ հիմնուած թուրքիան, միջազգայնօրէն չդատապարտուած, անպատժելիութեան զգացումին տուած համարձակութեամբ յանդուրդն սպառագինուած, տարածաշրջանին մէջ ապակայունացում յառաջ բերած, աննախատեսելի, սանձարձակ եւ յարձակողական քաղաքականութիւն վարող երկիր մը եղած է:

Անտեսելով միջազգային օրէնքները՝ Սուրիոյ հողատարածքը բռնաբարելէ ու այդ տարածքին վրայ «ահաբեկիչ»-ի որսորդութեան յետոյ, այժմ, այս տողերու գրուած օրերուն, Իրաքի հողատարածքի բռնաբարումին սկսած է:


Երբ գերպետութիւններ, կաշկանդուած իրենց հակասական շահերէն, կը տատամսին Օսմանեան Կայսրութիւնը վերականգնելու մարմաշով բունկած թուրքերու գնացքին արգելք ըլլալ, Իրաքի մէջ ալ «ահաբեկիչներ որսալ»-ու գացող թուրքիա, ինչպէս Սուրիոյ մէջ ըրած էր, Իրաքի մէջ ալ հազարաւոր անմեղ ու խաղաղ քաղաքացիներու կեանքի թելը պիտի կտրէ:

Թուրքիա, 20 Յունուար 2018 թուականին, Սուրիոյ Աֆրին քաղաքին վրայ յարձակման սկսաւ «Զիթենիի ձիւղ» կոչեալ զինուորական գործողութեամբ մը, որ կը յիշեցնէ 20 Յունուար 1974 թուականի թրքական բանակին Հիւսիսային Կիպրոսի գրաւման «Խաղաղութեան Գործողութիւն»-ը: Ըստ թրքական պաշտօնական յայտարարութիւններու, թուրքերու նպատակն է այդ շրջանները փրկել ահաբեկչական կազմակերպութիւններու բռնագրաւումէն՝ ապահովելու համար թուրքիա գտնուող սուրիացի գաղթականներու Սուրիա վերադարձը: Այս առթիւ թուրքերու նախագահը կը յայտարարէ. «Կը յուսանք, որ կարճ ժամանակի մէջ պիտի աւարտենք գործողութիւնը ու վերադառնանք՝ յարգելով Սուրիոյ հողային ամբողջականութիւնը»:

Երկրորդ Աշխարհամարտէն առաջ հիթլերական Գերմանիան, 15 Սեպտեմբեր 1938-ին, վստահեցուցած էր Մեծն Բրիտանիային, թէ իր վարած քաղաքականութիւնը յարձակողական քաղաքականութիւն չէր: Տարի մը յետոյ, 1 Սեպտեմբեր 1939-ին, Գերմանիա արդէն իսկ սկսած էր Եւրոպայի գրաւման:

Վերջին դարերու ընթացքին,

«ԵԹԵ ՈՐԲ ՄՆԱՅ ԳԻՐՔԸ ՀԱՅ ՄԱՐԴԵՆ, ՈՐԲ ԿԸ ՄՆԱՅ ՀԱՅԸ ԻՐ ՀԱՅՈՒԹԵՆԵՆ»



ԱԼԵԿՍ ՍՐԿ. ԳԱԼԱՅՃԵԱՆ
Ազգերը ընդհանրապես կը ճանչցուին իրենց գրականութեամբ, լեզուով ու մշակոյթով: Իսկ այն ժողովուրդները, որոնք այլևայլ պատճառներով աղարտած են իրենց ինքնութիւնն ու ազգութիւնը, չեն կրցած պահել ու պահպանել իրենց ազգութիւնը, դատապարտուած են ձուլումի: Սակայն հայ ժողովուրդը իր պատմութեան դժիւր օրերուն իսկ միշտ կառչած մնացած է հայ ոգիին, լեզուին ու մշակոյթին: Հայ լեզուն մեզի համար դարձաւ վահան ամրութեան՝ ընդդէմ օտարացման եւ ձուլման: Ան դարեր շարունակ մեզի ուժ ու եռանդներ շնչեց՝ պայքարելու մեր ազգը ջլատող օտարածին վտանգներուն ու ազդեցութիւններուն դէմ: Աներկբայ իրողութիւն է, որ հայ լեզուն դարձաւ մեր կեանքի հիմնաքարը, հայու գոյապատճառը ու լինելութեան աւելը, որուն շնորհիւ հայոց երկիրը ծաղկազարդուեցաւ:

Հայ լեզուին եւ գրականութեան ջահակիրներէն մին է՝ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանը: Սրբազանը իր հովուական ծառայութեան, Գանատայի եւ Ամերիկայի Առաջնորդութեան տարիներուն եղած է եւ է՝ հայ գիրի ու գիրքի պաշտպանն ու ջատագովորը: Սրբազանը հեղինակ է հայերէն եւ անգլերէն երկու տասնեակէ աւելի գիրքերու, որոնք ողորուած են իր փորձառութիւններով, մտահայեցներով եւ հոգեկան ապրումներով:

Այս բոլորին աւելնելով, Սրբազանը քաջ գիտակցելով, որ այսօր Ամերիկայի մեր երիտասարդութիւնը համաշխարհայինացման հեջոտ վազքին դիմաց ձուլման ենթակա է, հետեւաբար, զարկ տուած է հայ գիրքերու հրատարակման ազգանուէր գործին: 2003-ին, երբ Յովնան Արք. Տէրտէրեանը ընտրուեցաւ Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդ, իր հովանաւորութեամբ, քաջալերանքով, նախաձեռնութեամբ հրատարակուեցան հայերէն եւ անգլերէն լեզուներով աւելի քան 200-է աւելի հոգեւոր ու մշակութային բովանդակութիւն ունեցող գիրքեր:

Այդ հրատարակութիւններէն են. «Հայոց Եկեղեցին, Օրմանեան Պատրիարք», «Հոգեւոր Պատգամներ, Գարեգին Ա.», «Քրիստոնէական Կրօնքի Գիտելիքներ (հայերէն եւ անգլերէն)», «Աղօթագիրք», «Հաւատով Խոստովանիմ», «1600-ամեայ Խորհուրդ», «Դպրոցն Ահա՛ Հայկական, Ժագ Յակոբեան», «Ի Խո-

րոց Սրտի Խօսք Ընդ Աստուծոյ, Աղօթագիրք», «Շարակնոց, Եփրեմ Արք. Թապաղեան», «Հայ Վանականութեան Պատմութիւնը եւ Վարդապետներու Դասակարգը, Տ. Տաճատ Մ. Վրդ. Եարտրմեան» «Աղօթէ՛՛ եւ Աստուած կը Պատասխանէ - Ընտանիքին Աղօթագիրքը - Pray and God Answers: The Family Prayer Book, Fr. Stepanos Dingilian», «The Faith of the Armenian Church - The Teacher's Book, Hagop Nersoyan», «Words unto God from the Depths of My Heart», «The future of the Diocese is in our hands», «Prayer Mirrors Your Life», «Studies in the Armenian Church - Origins, Doctrine, Worship, Fr. Zaven Arzoumanian» եւ այլն:

Գերպ. Տ. Տաճատ Մ. Վրդ. Եարտրմեան խօսելով Սրբազանի անխոնջ աշխատանքին մասին՝ կ'ըսէ. «Լատինական հին առածը կ'ըսէ. «Խօսքերը կը թռչին, իսկ գրութիւնները կը մնան»: Յովնան Սրբազանը համոզուած է այս իրականութեան: Այդ համոզումը խրած է իր հոգեյատակին խորը, որմէ ներշնչուած եւ զսպանակուած անխոնջ կը գրէ, կը հրատարակէ, կը հետապնդէ, կը քաջալերէ գրասէր եւ գրագէտ անձնաւորութիւններ ու կ'ուզէ հրատարակել ամէն արժէքաւոր աշխատանք՝ ուրիշներու հոգեկան ու մտաւոր աշխարհները լուսաւորելու եւ զանոնք հոգեպէս ու մտապէս հաստատելու հիմնական մտահոգութեամբ: Լատինական վերոյիշեալ առածը որքան կը պատշաճի Սրբազանին գրասէր հոգիին, մտքին եւ հրատարակչական աշխատանքին, որոնք կը մնան վկանները անոր անվճատ գործունէութեան եւ

Շար.ը էջ 18

ՆԻԿՈԼ ԱՂԱԲԱԲԵԱՆԻ ԳՈՒՆԱԳԵՂ ԱՇԽԱՐՀԸ



Ընդհանրապէս ամէն ազգ, ամէն ժողովուրդ ունեցած է իր տաղանդաւոր զաւակները, որոնցմով հարստացած է այդ ժողովուրդի մշակոյթը: Հայ ժողովուրդն ալ, անշուշտ, բացառութիւն չէ եւ իր կարգին ունեցած է մեծ ու հոյակապ տաղանդներ, որոնք անջնջելի հետքեր թողած են մեր մշակոյթի եւ բարձրորակ արուեստի հարուստ երկնակամարին վրայ:

Այդպիսի արուեստագէտներէն է հայրենի գեղանկարիչ Նիկոլ Աղաբաբեան, որուն արուեստը հաստատուն քայլերով կ'ընթանայ դէպի այդ բարձունքը: Ան իր ամուր հետքը թողած է արդի հայ գեղանկարչութեան վրայ: Նիկոլի պատուները, մեծամասամբ բնանկարներ՝ աչքի կը զարնեն իրենց վառ գունազեղութեամբ եւ ի հարկէ կ'արտացոլեն նկարչի մեծ սէրն ու նուիրումը իր ինքնութեանը: Աղաբաբեանի արուեստի մէջ զգալի են հայրենի երկիրքի կապուտ ազդեցութիւնը: Կարծէք պատաստներու մէջէն դուրս ժայթքող ջերմութիւնը կը բխի հայրենի հողի ընդերքէն, կը մտնէ դիտողի սրտին ու հոգիին մէջ՝ իր համար մնացուն տեղ մը ապահովելով հոն:


Ահա թէ ինչ կ'ըսէ Հայաստանի Հանրապետութեան ժողովրդական նկարիչ պրոֆէսոր Հրանդ Թադէոսեանը Նիկոլի արուեստի առնչութեամբ. «Նիկոլի տաք գոյներից պատերն ասես ճաք են տալիս, դրանք լուռ մենախօսութիւններ են՝ հոգեկան խոր զգացումների մասին պատմող: Նկարչի կտաւներում բնութեան բազմաձեւութիւնները շատ մարդկային հնչեղութիւնն են ստացել: Դրանք իւրատեսակ մունետիկներ իբրեւ, մեզ

չիչեցնում են մեր լինելութիւնն ու կենսակերպն ապահովող կարեւոր մի գոյութեան մասին, որի հանդէպ մեր վերաբերմունքն անցել է դատանութեան սահմանները: Մինչդեռ Նիկոլը մի անսովոր դաշինք է կնքել բնութեան հետ ու գունային յուզախոռով սքանչելի մի բանաստեղծութիւն ձօնել նրան: Նկարներից մէկը հեռուից ներսումդ տաք ալիք է բարձրացնում, խառնում մտքերդ, զգացումն քննրդ աշխուժացնում, ասես մեղեդի ես լսում, նկարը խօսում է հետք թրթռացող վէտվէտացող գոյների լեզուով»:

Նիկոլ Աղաբաբեան, մեղմ եւ հանդարտ էութիւն մըն է, սակայն ներքուստ ան միշտ պայքարած է մեր կեանքի մէջ առկայ անարդարութիւններու դէմ: Պատահական չէ, որ Արցախեան ազատամարտի առաջին իսկ օրերէն Նիկոլ անդամագրուեցաւ Ազատութեան Բանակին՝ ձեռնամուխ ըլլալով հայրենիքի պաշտպանութեան սրբազան գործին: Իր կտաւներէն մէկը նուիրուած է այդ պայքարին եւ կը կոչուի «Այո՛, յաղթեցինք»:

Նիկոլի արուեստի մասին Հայաստանի Հանրապետութեան Գեղարուեստի ակադեմիայի տնօրէն՝ ՀՀ արուեստի վաստակաւոր գործիչ՝ պրոֆէսոր Արամ Իսաբեկեան կ'ըսէ. «Նիկոլ Աղաբաբեանը Հայաստանի Հանրապետութեան ամենաճանաչուած նկարիչներից է: Այդ հանգամանքը հաստատում է նաեւ ՀՀ Մշակոյթի Նախարարութեան «Ոսկէ Մետալ» եւ ՀՀ Սփիւռք Նախարարութեան «Արշիլ Կորքի» մետալներով պարգևատրուելը: Նա ունի ինքնուրոյն ձեռագիր, որը

Շար.ը էջ 19



ՆԻԿՈԼ ԱՂԱԲԱԲԵԱՆ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՆՆԱԽՆԸՆԹԱՑ ՑՈՒՑԱՐԱՆԴԵՍ

ԲԱՅՈՒՄ - ՈՒՐԲԱԹ, ՅՈՒՆԻՍ 1, 2018 • ԵՐԵՎԱՆԻ 7:30 - 10:00
 ՇԱՐԱԹ, ՅՈՒՆԻՍ 2 • Կ.Ե. 5:00 - 9:00 / ԿԻՐԱԿԻ, ՅՈՒՆԻՍ 3 • Կ.Ե. 3:00 - 7:30
 Հ.Բ.Ը.Ս. ՎԱՉԵ ԵՒ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԿԵՊՈՆ
 ՊՈՅԱՅԵԱՆ ՍՐԱՀ - 2495 E. MOUNTAIN ST., PASADENA, CA 91104

NIKOL AGHABABYAN

EXCLUSIVE EXHIBIT OF PAINTINGS

OPENING RECEPTION - JUNE 1, 2018 • 7:30 PM - 10:00 PM
 SATURDAY, JUNE 2 • 5:00 PM - 9:00 PM / SUNDAY, JUNE 3 • 3:00 PM - 7:30 PM
 A.G.B.U. VATCHE & TAMAR MANOUKIAN CENTER
 BOYAJIAN HALL - 2495 E. MOUNTAIN ST., PASADENA, CA 91104
 FOR MORE INFORMATION, PLEASE CALL 818.445.0094

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ «ԵԱՅԼԱՅ»

ՊՕՐՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Հայկական Սրբազան Լեոնաշխարհ, երկինք ճախրող լեոններ, գնում «Ծիր կաթին» աստղաբոլ, աստղեր քաղում, իրենց ձիւնոտ գագաթներին որպէս կանթեղներ վառում: Շարան-շարան լեոններ, կարծես պար բռնում, արեգակն է լոյս փռում նրանց երեսներին, իրիկուններին աստղերն են ժպիտ թարթում նրանց վրայ: Արմին արի մարդ, իրիկուններին ա՛նցել են քու լեոնների աշխարհի ճամբաներով, պիտի տեսնէիր քու բնօրրանի լեոնների բարձր գագաթներին հրդեհ վառուում, նրա բոցերը լոյս փռում քու աշխարհի երեսին: Լուսոտ երկիր է այն, աշխարհի մարդիկ հաւաստում են, որ դրախտը այնտեղ է եղել, Եւայի յանցանքով Աստուած փլել է այն, մարդիկ պահել են նրա յուշը: Արմին արի մարդ, քու երկրի ճամբաներով անցնող հարաւի կողմն աշխարհի մարդիկ գմայլել նրանց հրացուլքով, կրակի երկիր՝ Արմինա-Նախրի, դրախտիկ երկիր կոչել այն: Աստուած բարկացել էր մարդկանց գործած մեղքերի համար, օրեր-օրեր ջուր հոսել երկիր մոլորակ վրայ, պատուիրել էր մի բարի մարդու տապան պատրաստել, պատապարել ընտանիքին ու աշխարհի կենդանիներին, այն հանգրուանել էր Հայկական Սրբազան Լեոնաշխարհի ձիւնոտ Արարատի գագաթին:

Մայիս...գարուն ա արել Հայոց աշխարհը: Գարնան հէքիաթն էր գրկել Հայոց լեոնները, արեգակն էր իջել իր կրակ վարսերով համբուրելու նրանց լանջերը, ափերով լոյս, կրակ ցողել դաշտերին, այգիներին: Ջարթում էր Հայոց Սրբազան Լեոնաշխարհը, լեոններ արելի լոյսի հուրը գրկած թօթափել իրենց սպիտակ հանդերձը: Գարնանը, լեոնների լանջերի ձիւնն էն պատում կարմիր, սպիտակ, կապոյտ ծաղիկներ, Աստղիկ դիցուհու գեղեցկութեան լոյսը իջնում նրանց երեսներին, արեւն էր ժպտում նրանց: Ծաղկում էին դաշտերը, պայթում էին ծառերի բողբոջները, ծաղկած ծիածանով քողում Հայոց այգիները: Ծաղկում էր Հայոց աշխարհը, ծաղկում էին Արմին-հայերի սրտերը, յաւերժութեան խորհրդանիշ նունենիները կարմիր լոյսով ծաղկում, հոնի ծառերը պայթում կարմիր կրակով, մի վախենար, մօտեցիր նրանց, քու սրտին կ'իջնի Հայոց աշխարհի գարնան ծաղկունքի խորհուրդի օրհնութիւնը:

Գարուն ա... մայր բնութեան սքանչանքով արբեցած արի Արմին-հայեր, լուսնեակի անուշ դէմքից, հրավառ աստղերի լոյսից պայթած հազար-հազար գոյնի ծաղիկներին պաշտամունք նուիրել: Այգիներին, դաշտերին ելած ծաղկունքը մարդկանց սրտերին, հոգիներին սիրոյ ու գեղեցկութեան հրավառութիւն գեղում, ժպիտ տեղում նրանց դէմքերին: Բանաստեղծների սրտերին սիրոյ խորհուրդ, բանաստեղծութեան հրալք պայթում: Լեոնան լանջերի ձիւնը պայթած ձնծաղիկների գոյնի ծիածանից յառնած Աստղիկ դիցուհին, վարդերի թերթիկներ փռել Հայոց աշխարհի վրայ, որ մայրեր իր գեղեցկութեամբ պարմանուհիներ նուիրէին իր ենց արմենական ցեղին: Գարուններին գնում իրենց աստուածների մեհաններ, խուր-

ձերով ծաղիկ փռում իրենց աստուածների բազմաթիւն, խնդրում մայրացնել ծաղկած ծառերը, առատութիւն պարգեւէին Հայոց աշխարհին: Ապոլլոնի քոյր մուսաների լեոնան լանջերի արտերի ծաղկունք, կարմիր կակաչների հրեղէն արօտ, գարնան կարմիր լոյսի ծովեր, հովիկներն էին այն քրքրում, որ չհանգէր նրանց կրակը: Կրակ, Պրոմէթէան էր այն խլել Ողիմպոսի Հեպեստոս աստուծոյ հնձանից... նուիրել մարդկանց:

Արեւմտեան մշակոյթով ու գիտելիքներով իմաստացած Արմին-հայերի արի Տրդատ թագաւոր, երկրին տարել նոր հաւատքի լոյսին: Բուռն հաւատքով նուիրուել նրան, կրօնական ասպառելի որոշ մարդիկ հաւաստում են, որ իրենց նոր հաւատքի խորհուրդում նախնիների հաւատքի նոյնաբանութեան տարրեր կան: Նոր հաւատքի լոյսի շղարշով քողել էին նախնիների պաշտամունքի բոլոր-բոլոր տօնախմբութիւնները: Մայիսի ծաղկունքի պաշտամունքի տօնը փոխարինել Քրիստոսի հրաշափառ «Համբարձման» փառաբանման տօնակատարութեանը: Յեղի արի մարդիկ իրենց սրտերում պահպանել են նախնիների աւանդութիւնները, որոնց արձագանգը դեռեւս հնչում է:

Քրիստոսի Համբարձման տօնը, նշուում է Նրա Յարութեան 40-րդ օրուան հանդիպող Հինգշաբթի օրուան: Համբարձում նշանակում է բարձրացում, յարուցեալ Յիսուսի երկինք բարձրանալը: Ըստ Ղուկաս ու Մարկոս աւետարանիչների, Քրիստոս, մարդկային կերպարանքով երեւացել իր աշակերտներին, քառասուն օրեր շրջել երկրի վրայ, ապա համբարձել: Քրիստոսն էութիւնը, ժողովրդական տօները յարմարեցրել է իր գաղափարախօսութեան արարողութիւններին, ինչպէս նախաքրիստոնէական Հայաստանում ժողովրդական գարնանային վերջին տօնը Քրիստոսի համբարձման տօնին:

Նախնիներն էլ Համբարձումի տօնակատարութիւնները սկսել էին Չորեքշաբթի, այն կոչել Ծաղկամօր Կիրակի: Ըստ աւանդութեան,



Ծաղկամայրը, քրիստոնէայ վարժաւ կոյան էր, որը կռապաշտ հօրմէն փախուստ տալով ապաստանել Աշտարակ աւանի մօտ գտնուող Արայի լեռ: Նրա հայրը հետապնդում էր աղջկան, քարանձաւի մէջ գտել գայն. . . սպաննել: Մահանալուց առաջ աղջիկը խնդրում է Աստուծոց ծաղիկի ու կարմրուկի հիւանդութիւններ ունեցող մանուկները բժշկուէին: Քարանձաւը դառնում է ուխտատեղի, նրա պատերից ջուր հոսում, ժողովուրդը հաւատում, որ վարժաւ կոյսի արցունքներն են:

Համբարձման ու «Վիճակ»-ի տօնահանդէսը խորհրդանշում է մարդու ու բնութեան կապը, նրա բեղունութեան շրջանում գարնան գօրութեան հաղորդակցելը: Համբարձման Չորեքշաբթի լոյս Հինգշաբթին հրաշքների գիշեր էր, հաւատում էին, որ տարին մէկ անգամ աստղերը գալիս միանում իրար, տիեզերքը մի անկթարթ կանգ առնում, երկինքն ու երկիրը իրար ողջունում, ծառերն ու ծաղիկները սկսում խօսել, պատմում իրենք ինչ ցաւ էին ամոքում: Այդ գիշեր, կանաչ դաշտ էին գնում, բուժիչ խոտեր հաւատում, ցօղի կաթիլներ ջրի հետ խառնելով լողանում, վարսերը լուանում, բորոտ հիւանդները թաւալում ցօղոտ կանաչների վրայ: Համբարձման գիշերը չար ուժեր էին գալիս, հաւատում էին, որ նրանք հարս ու աղջիկ կարող էին փախցնել, կովերի կաթը ցամքեցնել: Նրանց վանելու համար հարսեր աւել էին

հեծնում, եօթ անգամ պտտում տների շուրջ, անասունները գոմերից հանում, նրանց հետ բացօթեայ քնում:

Հինգշաբթի առաւօտ կաթնապուր էին եփում, որ հունձքի առատութիւն լինէր, կարկուտից ու մորեխներից արտերը ապահով պահելու համար՝ մի քանի շերտի շաղկապ նրանց շուրջը: Կաթնապուրը մատաղ էր, այն բաժանում էին եօթը տեղ: Բնութեան բեղունութիւնը անխաթար պահելու համար Համբարձման տօնին կենդանի չէին մորթում, ծաղիկներով զարդարում էին նրանց:

Հայ աղջիկները, ամէն Մայիսին խմբերով բարձրանում էին ձիւնոտ Արագածի, Լոռուայ կախարդական սարերի լանջեր, ալուան ծաղիկներ, փրափիտն ծաղիկներ քաղում, հարսանեկան պսակներ հիւսում ու կապում իրենց ճակատներին: Քառասուն տեսակի հաւաքած ծաղիկները լցնում ջրով լի փարչերի մէջ, որ նրանով ջրուէին, որ Հայկի հողի սարսուռով դողային իրենց սրտերը: Նախնիներ, ծաղիկների փարչերի ջուրը բերում էին Բիւրակն աղբիւրներից, ծաղիկները նրա լանջերից: Այդ քառասուն աղբիւրներից էր պայթել Անդրանիկ քաջի «Ասլան» անունով սպիտակ ձին: Բիւրակն աղբիւրների ջրերում՝ հայեր ու Ալաուիներ միասին Մայր Անահիտի ծնունդն էին տօնախմբում: Հիմա ո՞վ է Հայոց աշխարհի գեր-

Շար.ը էջ 19

ՈՂՋՈՒՆԱՀԱՆՈՒԷՍ

Voices In Silence

MY BODY CRIED, MY SOUL CRIED, MY HEART CRIED.

Pilgrimage To Western Armenia, Cilicia And Cappadocia GARBIS DER-YEGHIAYAN

Կազմակերպութեամբ՝

Մաշտոց Գոյէճի Հոգաբարձութեան,

Տիկնաց Միութեան եւ

Bluebird Publishing House-ի

Հանդիսավար՝

Դոկտ. Վաչէ Մանկրեան

Բանասէս՝

Սարգիս Մաճառեան

Գեղարուեստական Յայտագիր՝

Թագուհի Արզումանեան (Ասմունք)

Անժելա Ամիրեան (Ջութակ)

Արարս Կարապետեան (Մեներգ)

Տեղի կ'ունենայ

Կիրակի, Մայիս 20, 2018, Կ.Տ. Ժամը 5:00-ից

Սր. Գրիգոր Լուսատրիչ Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ

Գոյումճեան Սրահին մէջ

1510 E. Mountain St., Glendale, CA 91207

Հովանաւորութեամբ՝

Տէր եւ Տիկ. Մանուկ եւ Սոնիա Ազրլեանի

Նուիրում՝

Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեանի

"Voices in Silence"

Արեւմտեան Հայաստանի, Կիլիկիոյ եւ Կապադոկիոյ աննախընթաց գունազարդ Photo Album-ին

Մուտքը Ազատ Հիւրասիրութիւն

30 ՏԱՐԵԿԱՆԸ ԱՆՑ ԿՆՈՋ ԻՆՉ ԲԱՆ ԿԿԱՆՉԱՆԳՍԱՑՑՆԷ ԱԻԵԼԻ ՇԱՏ

Ըստ վիճակագրության մար- դը իր կեանքի բարձունքներուն կը հասնի 30-էն ետք: Կան բազմաթիւ օրինակներ, որոնցմէ հետաքրքրա- կան են դերասաններն ու գիտնա- կանները:

Օրինակ, պատահած է, որ դերասաններ բազմաթիւ անգամներ առաջադրուած են օսքար ստանա- լու համար, սակայն, այդ փափաքե- լի արձանիկը ստացած են 40-էն ետք: Նոյնն է պարագան գիտու- թեան աշխարհի մէջ եղողներու, որոնցմէ շատեր Նոպլէիան մրցա- նակը ստացած են 35-էն ետք:

Ամուր հայեացքը 30-ամեայ կանանց վհատութեան հիմնական պատճառը կայունութիւնն է: Բո- լոր ուսման թիւ երազանքները, սի- րային փոթորիկները եւ ասպարէ- զի մէջ առաջին անփորձ քայլերը մնացած են անցեալի մէջ: Կը թուի, թէ ոչ մէկ նոր բան կայ եւ իրադարձութիւնները աւելի դժուար կը յուզեն երեւակայու- թիւնը: Կեանքը կը դառնայ կան- խատեսելի՝ աստիճանաբար վերած- ուելով միօրինակութեան: Կինը ու- ման թիւ անձնաւորութիւն է, անոր համար անհրաժեշտ են փոփո- խութիւնները, ան կ'ուզէ զարմա- նալ, սիրախաղ ընել եւ երբեմն ալ՝ խենթութիւններ: Հոգիով միշտ երիտասարդ, ան պէտք է ժպտներ պարզեւէ, հաճոյախօսութիւններ հաւաքէ եւ վայելէ կեանքը: Հասկ- նալ, որ ժամանակը կ'անցնի շատ արագ՝ տանելով լաւագոյն պահե- րը, կը տխրեցնէ: Անցեալը ետ չես բերեր, առօրեան ուրախութիւն չի պարզեւեր, իսկ ապագան ոչ մէկ բացայայտում կը խոստանայ:

Կը պարզուի, որ երբեւիցէ ցանկալի վատահոլութիւնը վաղուան օրուան հանդէպ այսօր այլեւս պէտք չէ: Իսկ արդեօք անոնց չենք ձգտիր երիտասարդ տարիքին: Ինչի՞ հա- մար կ'անցնին ջուրի եւ կրակի մէջէն, եթէ ոչ հանգիստ ապագայ ապահովելու համար: Անհրաժեշտ է յիշել, թէ ինչի համար ապրած ենք կեանքի առաջին կէսը: Ձեռք բեր- ուած կայունութեան հաճելի անց է,

որ այժմ կայ վայր, ուր կրնանք հանգստանալ, պայքարի տրամադր- ուիլ եւ նոր ուժերով նետուիլ կեան- քի եռացող հոսքին մէջ: Իսկ ուսման- թիւ վիճակը արդէն կրնանք մեր ձեռքերով ստեղծել:

Յանկալի մայրութիւնը- Մեր օրերուն 30-ամեայ կինը պարտա- դիր չէ, որ հասցուցած ըլլալ մայրանալ: Շատերուն կը յուզէ «մանկական» հարցը, սակայն ին- չու: Ժամանակն է արդէն մայրա- նալու, թէ՞ յոգնած էք ըլլալէ հպարտ եւ անկախ գործարար: Ո՛չ մէկ տեղ նշուած է, որ հիմա է ժամանակը գաւազ ունենալու: Այդ պատճառով մի նեղուիք, միայն կինը գիտէ, թէ երբ պատրաստ է մայրանալու, եւ, եթէ միջինէ աչքի մտիկա տեղի չէ ունեցած, ուրեմն ամէն ինչ ունի իր պատճառը:

Երջանկութեան թռչունը- Տղա- մարդը, տարիքին գուզնութեան, կը նմանցնեն գինիի. հետզհետէ կը դառնայ աւելի լաւ: Կինը կարելի է նմանցնել քոնեակի, ան տարիներով աւելի կ'արժեւորուի: Անցնելով 30- ի շեմը, կինը արդէն լաւ կը պատ- կերացնէ, թէ ինչ կ'ուզէ եւ ինչպէս կրնայ հասնիլ անոր: Սակայն կա- րեւորը այն է, որ ան գիտէ, թէ ինչի արժանի է: Կինը ունի կազմաւոր- ուած սկզբունքներ եւ աւելի վստա- հելի է, բան մը, որ անգին կը դարձնէ գինք: 30-ի մօտ արդէն կը յայտնուի փորձը եւ իմաստութիւնը, որ թոյլ կու տայ խուսափիլ շատ տհաճ սխալներէ: Այդպիսի կինը շատ հետաքրքրական գրուցակից է:

Ան լաւ կը տիրապետէ իրեն եւ իրավիճակին, գիտէ, թէ ինչպէս ընդգծել իր առաւելութիւնները եւ թաքցնել թերութիւնները:

30-ի գլխաւոր առաւելութիւնը կայունութեան եւ նորութեան հա- մադրութիւնն է: Կեանքի այս ժա- մանակաշրջանը կը բանայ ինքնա- արտայայտման հնարաւորութիւն- ներ, որոնք առաջ անհասանելի էին: 30-ի մէջ այլ են արժէքները, ուրիշ է ընկալումը, սպասելիքնե- րը... Մէկ խօսքով, 30-ի մէջ կեան- քը կը շարունակուի:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿՐՆԱԼ ՓՈԽԵԼ ՁԵՐ ԱՇԽԱՐՀԱՅԵԱՑԸ

Հայելիի կանոն- Ձիւ շրջապա- տող մարդիկ իմ հայելին են: Անոնք կ'արտացոլեն իմ սեփական անձի առանձնատարածութիւնները, որոնց յա- ճախ են ալ չեմ գիտակցիր: Օրինակ՝ եթէ ոեւէ մէկը կը վիրավորէ գիւս, կը նշանակէ՝ ես այդպէս կ'ուզեմ, ես եմ ատոր պատճառը: Եթէ ոեւէ մէկը կրկին ու կրկին կը խաբէ գիւս, կը նշանակէ՝ ես հակուած եմ հաւատարմ ամէն ինչի: Այնպէս որ՝ ոչ մէկէն կրնամ նեղանալ:

Ընտրութեան կանոն- Ես կը գիտակցիմ, որ կեանքիս մէջ տեղի ունեցող ամէն ինչ արդիւնքն է իմ սեփական ընտրութեան:

Եւ եթէ ես այսօր կը շփուիմ ձանձրալի մարդոց հետ, կը նշանա- կէ՞, արդեօք, որ ես նոյնքան ձանձրա- լի մարդ եմ: Վատ կամ չար մարդիկ չկան, կան դժբախտ մարդիկ: Եթէ ես կը լուծեմ անոնց խնդիրները, ուրեմն աստիկա ինձի համար հաճելի է: Ես եմ պատճառը այն ամէնուն, ինչ տեղի կ'ունենայ հետո: Իմ ձակատագրի հեղինակն ու ստեղծողը ես եմ:

Մխալելու կանոն- Ես համաձայն եմ, որ կրնամ սխալիլ: Միշտ չէ, որ ուրիշները կրնան արարքներս ու

կարծիքս ճիշդ համարել: Իրական աշխարհը միայն սեւն ու ձերմակը չեն, նաեւ բաց մոխրագոյնն ու մութ ձերմակը կան: Ես կատարեալ չեմ, պարզապէս լաւ մարդ եմ եւ սխալելու իրաւունք ունիմ: Կարելորդ սխալնե- րը ընդունելու եւ ժամանակին շտկե- լու կարողութիւնն է:

Համապատասխանութեան կա- նոն- Ես ունիմ այն եւ այնքան, ինչին արժանի եմ, ո՛չ աւելի, ո՛չ պակաս: Եթէ ես չեմ կրնար խելագարելու աստիճան սիրել մէկը, ծիծաղելի է պահանջել, որ այդ մարդը գիւս այդպէս սիրէ: Այնպէս որ՝ իմ բոլոր պահանջները անիմաստ են: Միաժա- մանակ, երբ ես կ'որոշեմ փոխուիլ, կը փոխուիմ նաեւ գիւս շրջապատող մար- դիկ (դէպի լաւը):

Կախուածութեան կանոն- Ոչ ոք պարտք է ինձի: Իսկ ես կրնամ անշահախնդիր օգնել բոլորին, եթէ կրնամ: Եւ աստիկա ինձի ուրախու- թիւն կը պատճառէ: Բարի ըլլալու համար հարկաւոր է ուժեղ դառնալ: Ուժեղ դառնալու համար հարկաւոր է հաւատալ, որ ես ամէն ինչ կրնամ: Իսկ ես կը հաւատամ: Բայց պէտք է նաեւ կարենալ «Ո՛Ձ» ըսել:

10 ԲԱՆ, ՈՐՈՆՔ ՉԿԱՆ ՆԵՐԿԱՇՆԱԿ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԷՋ



Մարդիկ յարաբերութիւններ կը կառուցեն երջանիկ ըլլալու համար, սէր ու յարգանք ընդունե- լու եւ տալու, ուրախութիւնը կի- սելու: Սակայն յաճախ բան մը սպասուածին պէս չ'ըլլար եւ յա- րաբերութիւնները կը դառնան աւե- լի շատ ճնշուածութեան քան ուրա- խութեան աղբիւր:

Հիւանդագին, խնդրայարոյց յարաբերութիւնները կը հիւծեն, կը դառնան յուզական խնդիրներու եւ հոգեկան ապրումներու աղբիւր: Ներդաշնակ յարաբերութիւնները չեն կառուցուիլ մէկ օրուան մէջ եւ միակողմանի չեն: Ինչպիսի՞ յարա- բերութիւնները կարելի է անուա- նել ներդաշնակ եւ երջանիկ: Ահա- ւասիկ 10 բան, որոնք պէտք չէ ըլլան այդպիսի յարաբերութիւն- ներու մէջ:

1) Կշտամբանք: Կշտամբանքը ինքնին թունաւոր յարաբերութիւն- ներու նշան է: Անիկա կոչուած է ուղղելու գոյգի վարքագիծը՝ յար- մարցնելով իրեն: Կշտամբանքը մեղ- քի զգացողութիւն առաջացնելու փորձ է՝ սեփական ցանկութիւնը կատարելու համար: Երջանիկ յա- րաբերութիւններու կառուցման, յու- զական առողջ յարաբերութիւններ կառուցելու համար այս հնարքը կարելի չէ օգտագործել:

2) Նեղուածութիւն: Հասուն մարդը կը հասկնայ, որ նեղուա- ծութիւնը ուղղակի սպասելիքի եւ իրականութեան անհամապատաս- խանութեանն առաջացած արձա- գանգ է: Այդ պատճառով, ներդաշ- նակ յարաբերութիւններու մէջ մար- դիկ միմեանց համար չեն կազմեր սենարներ, որոնցմով պէտք է ապ- րիլ: Երջանիկ յարաբերութիւննե- րու մէջ կայ ա՛յն, որ կը բացառէ երկարատեւ նեղանալը, աստիկա ըն- դունիլն է:

3) Անբաժանելիութիւն: Իբ- րեւ կանոն, անբաժան ըլլալը կը նոյնանայ սիրահար գոյգերու հետ: Սակայն սիրահարածութիւնը միշտ չէ որ ներդաշնակ յարաբերու- թիւններու կը տանի: Երջանիկ, ամուր եւ երկարատեւ յարաբերու- թիւնները չեն կապեր երկու մար- դոց եւ պարտադրեր մշտապէս միասին ըլլալ: Հակառակը, երկու առանձին անձնաւորութիւններ, ամբողջացնելով գիրար, կրնան շա- րունակել իրենց զարգաց ման ճա- նապարհը: Մարդիկ կարիք ունին միմեան մնալու իրենք իրենց հետ, ունենալու անձնական ժամանակ եւ տարածք: Այն յարաբերութիւննե- րը, ուր աստիկա չկայ, կը փլուզուին:

4) Խանդ: Խանդը սիրոյ նշան չէ: Անիկա յուզական ան հասունու- թեան, վատահոլութեան պակասի նշան է: Խանդը կրնայ առողջ յարաբե- րութիւնները դարձնել թունաւոր եւ հիւժոճ:

5) Պարտաւորութիւններու բա- ժանում: Խօսքը տնային գործերու մասին չէ: Աստիկա այն է, երբ ամէն մէկը իր գլխուն մէջ կ'ունենայ յստակ պատկեր, թէ ինչ կ'ակնկալէ գոյգէն եւ ինչ ինքը պէտք է

փոխադարձ տայ: Ներդաշնակ յա- րաբերութիւններու մէջ հիմքը մէ- կը միւսին հոգ տանիլն է եւ, եթէ ոեւէ մէկը բաւարար չափով աստիկա չի ստանար, անպայման կ'ըսէ այդ մասին: Պէտք է հասկնալ, որ իրա- կան երջանկութիւնը գծագրող չի պատրաստուիլ, այլ՝ կը կառուցուի սիրոյ հիման վրայ:

6) Սուտ: Բոլորը լաւ գիտեն, որ սուտ կը քայքայէ ներդաշնակ յարաբերութիւններու հիմքը՝ վստա- հութիւնը: Նոյնիսկ եթէ այդ սուտը լաւի համար է, վաղ թէ ուշ անիկա կը բացայայտուի: Յարաբերութիւն- ները, որոնց մէջ անհրաժեշտ է ստել, արդէն խնդրայարոյց են եւ անոնց հետ պէտք է բան մը ընել, կա՛մ բուժել, կա՛մ բաժնուիլ:

7) Մրցակցութիւն: Միու- թիւնը, որուն մէջ ամուսինները կը փորձեն իրարմէ առաջ անցնիլ որեւէ ոլորտի մէջ, չի կրնար երջանիկ համարուիլ: Ձուգերը են- թազիտակցաբար կը սկսին իրա- րու մէջ տեսնել մրցակիցներ եւ չեն կրնար մէկ ամբողջութիւն ըլլալ: Երբ ընտանիքի մէջ գոյութիւն ունի մրցակցութիւն՝ կը ստեղծ- ուին տարբեր խնդիրներ: Մրցակ- ցութիւնը կը տեղափոխուի կեան- քի այլ ոլորտներ եւ կը գրկէ փոխըմբռնումէ, ջերմութիւնէ:

8) Յարձակողականութիւն: Եթէ յարաբերութիւններուն մէջ յար- ձակողականութիւն կայ, յուզական կամ ֆիզիքական բռնութիւն, անոնց կարելի չէ երջանիկ անուանել: Ներդաշ նակ յարաբերութիւննե- րու մէջ մարդիկ չեն խուսափիր յու գումները ցոյց տալէն, սակայն այնպէս կ'ընեն, որ գոյգը չնեղա- նայ: Յարձակողականութիւնը կը ծնի վախ, իսկ վախը կը հեռացնէ մարդոց եւ յարաբերութիւնները կը դարձնէ հիւան դոտ:

9) Երրորդ դէմքեր: Կնոջ եւ տղամարդու միջեւ առողջ յարա- բերութիւնները կը կառուցուին միայն այն ժամանակ, երբ անոնց միջեւ ոչ մէկը կանգնած է: Եթէ փոխյարաբերութիւնները կառուց- ուած են սիրային եռանկիւնի մէջ, ուրեմն անոնք անյարմարութեան, ցաւի, տանջանքի պատճառ կը դառնան բոլոր մասնակիցներուն համար: Երրորդ կողմը կրնան ըլլալ ծնողները, որոնք չեն ընդու- նիր գաւազի մեծնալու փաստը եւ կը փորձեն ամէն ինչ վերահսկել: Աստիկա կը դառնայ շատ գոյգերու բաժանման պատճառ:

10) Ուշադրութիւն: Երբ եր- կու սիրող սրտեր կը միաւորուին, միմեանց հանդէպ ուշադրութիւնը կը դառնայ շնչառութեան նման բնական բան: Իրական սէրը կը թելադրէ քայլեր եւ այդ ամէնը տեղի կ'ունենայ բնական կերպով: Ուշադրութեան պակասը յարաբե- րութիւններու մէջ կը խօսի այն- տեղ անցանկալի բաներ կատար- ուելուն մասին: Յաճախ այդպիսի յարաբերութիւնները հնարաւոր չէ վերականգնել:

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

ԽԵՂԱԹԻՐՈՒՄ ԵՒ ԺԽՏՈՒՄ

Շարունակուած էջ 14-էն

մեր պատմութիւնը ուղղակի կամ անուղղակի կերպով թուրքիոյ պատմութեան հետ կապ ունի: Այնքան ատեն, որ թուրքիոյ մէջ ժողովրդավար կարգեր չհաստատուին, թուրքիա պիտի շարունակէ մնալ հայուն եւ Հայաստանի համար որպէս ոչ-բարեկամ երկիր: Որով թուրքիոյ գործադրած շրջափակման եւ անոր դրոշմներով շարժող Ատրպէյճանի արցախեան յարձակողական քաղաքականութեան մէջ ոչ մէկ փոփոխութիւն պիտի ըլլայ: Հայոց Յեղասպանութիւնը պետական ճանաչում պիտի չգնէ, դպրոցական գիրքերու մէջէն հայր վարկաբեկող էջերը պիտի չհանուին, թերթերու մէջ պիտի չարունակուին քրէական յանցանք նկատուող հայերը անհանգստացնող, ատելութիւն սերմանող գրութիւններու հրատարակումը: Յանցագործները ոչ իսկ հարցաքննութեան պիտի ենթարկուին: Յատկապէս Արեւմտեան Հայաստանի մէջ իրենց գոյութեամբ միլիոններ հաշուող իսլամացած, իսլամացուած, ծպտեալ կամ գաղտնի՝ ծածուկ հայեր կամ անոնց ժառանգորդ ներք պիտի չարունակեն նախընտրել իրենց հայկական ինքնութիւնը ծածուկ պահել:

Հայ ժողովուրդը յիշատակելով Յեղասպանութեան 100-ամեակը (1915-2015) (եւ գտնուելով իր պետականութեան վերականգնման 100-ամեակի սեմին) (1918-2018), կը յառաջանայ դէպի լուսաւոր հորիզոններ:

Սակայն անցեալը մոռնալ կարելի չէ, բայց անցեալին գերի մնալ՝ ո՛չ: 20 տարի առաջ, օրուան նախագահ Ռոպերթ Քոչարեան Ապրիլ 24-ին կ'ըսէ. «Մենք չենք ուզեր անցեալին գերին ըլլալ, սակայն ձերբազատման ճամբան՝ աշխարհի կողմէ անցեալին ճիշդ գնահատումն է: Յեղասպանութեան ճանաչման մեր պահանջքին իրագործումը կը ծառայէ տարածաշրջանին մէջ հանգստութեան եւ խաղաղութեան հաստատման: Ուրեմն, այսօր մեր գերխնդիրն է, համախմբելով համայն հայութեան եւ աշխարհի մարդասիրական բոլոր ուժերը, հաստատել պատմական արդարութեան յաղթանակը եւ ապահովել մեր հայրենիքի խաղաղ զարգացումն ու հզօրացումը»:

4 տարի առաջ ալ, օրուան նախագահ Սերժ Սարգսեան, 24 Ապրիլ 2014-ին, ՄԱԿ-ի ամպիոնէն կ'ըսէ. «Պատմութեան մէջ նախադէպ չունեցող՝ ամբողջ ժողովուրդի մը սպանող եւ հայրենագրկման նպատակ հետապնդող այդ ոճրագործութիւնը կը շարունակէ աշխարհի հայերու համար մնալ չսպիւսացած վէրք»:

Ըստ գերմանական «Stuttgarter Nachrichten» օրաթերթի 13 Գեկտեմբեր 2017-ի օրուան լրատուութեան՝ Գերմանիոյ մէջ կը գործէ «Osmanen Germania» (Գերմանիոյ Օսմանցիներ) (անունով կուփամարտի միութիւնը, որ գէնքեր կը գնէ, բողոքի ցոյցեր կը կազմակերպէ եւ թուրքիոյ նախագահ Ռ. Թ. էրտողանը քննադատողները կ'անհանգստացնէ: Միութիւնը Գերմանիոյ մէջ մօտաւորապէս 20 մասնաճիւղեր եւ 2.500 անդամ ունի: Միութեան քրէական գործունէութիւններուն պատճառով, հեռաձայնային խօսակցութիւնները Hessen նահանգի ապահովութեան տնօրէնութեան

կողմէ մտիկ կ'ըլլան:

Թուրքիոյ այժմու կառավարութիւնը կազմող Ա. Գէ. Փէ. կուսակցութեան երեսփոխաններէն եւ էրտողանի մտերիմներէն Մեթին Քիւլլինք (Metin Kulunk) (սերտ յարաբերութիւններ ունի միութեան այժմ ձեռքարկուած նախկին ատենապետ Մեհմետ Պաղճըի (Mehmet Bagci) (եւ նոյնպէս ձեռքարկուած նախկին փոխատենապետ Սելչուք Շահինի) Selcuk Sahin) հետ:

Գերմանական «Der Spiegel» պարբերաթերթն ալ կը գրէ, թէ 1 Յունիս 2016 թուականին, գիշերուան ուշ ժամերուն՝ 11:30-ին, Մեթին Քիւլլինք Պեռլինէն էրտողանին հեռաձայնած եւ Պոլստեսթակի մէջ Հայոց Յեղասպանութեան կապակցութեամբ օրէնքին ընդունումը միջոցին բողոքի ցոյցեր կազմակերպելու համար էրտողանէն հրահանգ սպասած է:

2017-ի Գերմանիոյ ընտրութիւններուն ձախակողմեան «Die Linke» կուսակցութեան շարքերէն երեսփոխան ընտրուած, 1971-ին թուրքիոյ վարժօ գիւղաքաղաքը ծնած քրտական ծագումով էվրիմ Սոմեր (Evrin Sommer) (ցոյցերու կապակցութեամբ ըսած է. «Մամուլի մէջ տեղ գտած լուրերու համաձայն, այստեղ ապրող թուրք ծագումով հայրենակիցները բողոքի ցոյց կազմակերպելու համար ճիշդ կը վատնեն, որպէսզի դէմ գան Պոլստեսթակի կողմէ ընդունուած այն որոշումին, որ կ'ընդունի, թէ 1915-1916 թուականներուն Օսմանեան կայսրութեան կողմէ հայերու դէմ ցեղասպանութիւն գործուած էր: Հայոց դէմ գործադրուած ցեղասպանութիւնը խորապէս պրպտումի ենթարկուած պատմական իրողութիւն մըն է եւ այս իրողութիւնը ասկէ վերջ պէտք չէ ուրացուի: Պատմական իրողութիւնները, եթէ նոյնիսկ պետութեան մը հիմնումին կապակցութեամբ հեքիաթներու ճշգրտութեան մասին կասկած արթնցնեն, պէտք է ճանչցուին»:

Թուրք պետութիւնը եւ թուրքիոյ մէջ տիրող քաղաքականութիւնը անցեալին հետ երես առ երես չի գար: Պետութեան կողմէ ազգայնապաշտութիւնը կը հրահրուի եւ այս ժամանակահատուածի ընթացքին հաւաքական հարցերը մինչեւ այսօր կը շարունակուին՝ տալով կործանարար արդիւնքներ»:

Գերմանական լրատու միջոցներու այս տեղեկութիւնները անգամ մը եւս կը փաստեն, թէ թուրքիա իր անցեալի սեւ էջերը քօղարկելու, պատմական իրողութիւնները ժխտելու համար նոյնիսկ քրէական գործունէութիւններու մէջ գտնուող կազմակերպութիւններու հետ ամենաբարձր մակարդակով կապեր ունի:

Ժամանակները կը փոխուին, կառավարութիւնները կը փոխուին, թատերաբեմին վրայ տեսնուող դէմքերը կը փոխուին, սակայն կայ բան մը, որ չի փոխուիր՝ թուրքիա ատելութիւնը հանդէպ հայուն:

Երբ 2 Յունիս 2016-ին Գերմանիա կը ճանչնայ Հայոց Յեղասպանութիւնը, թուրք ամբողջ Գերմանիոյ Կ. Պոլսոյ հիւլապտոսարանին առջեւ «Ամենալու հայր մեռած հայն է» կը պոռայ, առանց ոստիկանական կամ «լայնախոհ» եւ «ազատամիտ» քաղաքացիներու միջամտութեան:

ԵՐԵՒԱՆԻ ՄԱՍՅ ԳԻՐՔԸ ՀԱՅ ՍԱՐԴԵՆ


Շարունակուած էջ 15-էն

իրագործումներուն: Իրագործումներ, որոնք միշտ օրինակելի են, գնահատելի ու վարակիչ»:

Հայ ազգը գիրո՛վ կերտեց իր մշակոյթը, սիրելի՛ երիտասարդ, գիրո՛վ ապրեցաւ ու հոգեկան վերելք ունեցաւ: Հայ գիրը մեր ժողովուրդի գոյապահպանման հիմնական դրոշմը դարձաւ: Սակայն, այսօր, դժբախտաբար, հայ գիրքին տեղը դարձած է միմիայն գրադարանն ու մատենադարանը: Հայ երիտասարդներ սկսած են մոռացութեան գիրկը նետել հայ լեզուն, հայ գրականութիւնն ու հայ գիրը: Միւս կողմէ, համացանցը իր մագիլները լայնօրէն տարածած է ամէնուր, որուն իբրեւ հետեւանք՝ հայ երիտասարդը

կտրուած է իր սեփական մայրենի լեզուէն: Անմահանուն Գարեգին Ա. Կաթողիկոս կ'ըսէ. «Եթէ որք մնայ գիրքը հայ մարդէն, ո՛րք կը մնայ հայը իր հայութենէն»: Խոսքն է մեր կեանքի հողը առանց հայ գիրքի ահօսումին: Ան աղբիւր է, իսկ մենք՝ սափոր: Իւրաքանչիւր հայորդի պէտք է հայ գիրքը առնէ, տարրացնէ եւ միաձուլէ իր կեանքին հետ:

Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմը իր Առաջնորդով, աշխատակազմով եւ պատկան մարմիններով պիտի շարունակէ այս ոգիով ու նախանձախնդրութեամբ մեր Սփիւռքի հայորդիներու հայ լեզուի հետ կապը պահպանել ու խորացնել եւ անոնց հոգիները հայ գիրով, մշակոյթով ու լեզուով կանաչազարդել:



NATIONAL NOTARY ASSOCIATION
NOTARY PUBLIC

MEMBER

Garine Depoyan

626-755-4773
554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106
ghdepoyan@gmail.com

HARRY THE HANDYMAN SERVICES

**Air Conditioning Repair
Plumbing & Roofing
Water & Gas Pipes • Fencing & Painting
Iron Work Repair • Electrical Job**

Email: haroutig007@gmail.com

Dependable • Reliable • Fast Work

CALL HARRY

818.219.3314

**Ինքնաշարժ Վարելու Դասընթացքներ
Բացառիկ հմուտ և փորձառու
վարորդ-իրահանգիչ
Գործ Օհանեան-ի կողմից**

George Ohanian Driving & Traffic Instructor
Tell:(818) 434-6407
Email:geohanian@gmail.com
Website:georgedriving.com

AUTO BODY MAN

Ինքնաշարժի նորոգութեան ընկերութիւն մը կարիքը ունի տասը տարուան փորձառութիւն ունեցող Body Man-ի մը West Los Angeles-ի մէջ:
Հետաքրքրուողները կրնան հեռաձայնել Սթիվին
(949) 394-7757 թիւին:

ՀԱՄԱՐՁՈՒՄ «ԵԱՅԼԱՅ»

Շարունակուած էջ 16-էն

ուած լեռները՝ Արարատի, Սիփա- նի, Նեմրուծի, Թոնտուրէկի, Վա- րազայ, Արտոսի լեռների լանջերի ծաղիկներին հպում, քաղում, իրենց լանջերին փարում: Հայոց պատ- մութիւնը աւարտուած էջ, նրանք դեռ պիտի գնան Բիւրակնի լեռ- ներ, ձիւնի տակից զարթնած ձնծա- դիկներ հանեն, փրփրոն ծաղիկ- ներ հողից քաղեն, տանեն նուիրել իրենց եարին, տանեն Նեմրուծի գագաթին հանգրուանած Հայոց աստուածների ճակատներին պակ- ներ կապեն:

Տարագիր, անհող արեւորդի Հայ մարդ, քու նոր հանգրուանում արդեօք տօնախմբում ես քու Յի- սուսի Համբարձման տօնը, քու նախնիների ծաղիկի պաշտամուն- քը, քու սարերի «Համբարձում Եայլան»: Դու ո՞րտեղից ես ծաղիկ քաղելու, քու լեռների լանջերի հողի ծաղիկ չիք այնտեղ, մտքի թռիչքով սաւառնիր Յովհաննէսի Լոռուայ աշխարհ, ընկողմանիւ նրա լեռների լանջերի ծաղիկների մէջ, քաղիր մայր հողի ծաղիկներ, այն շաղ տուր քու յոգնած մարմնին: Գնա՛ Անուշի հովուական վրանի բացատ, «Ջան Գիւլում»-ի եկած աղջիկների հետ բոլորակ կազմիր, խենթացիր երգով ու ծիծաղով: Նրա լեռների լանջերից պայթած աղբիւր- ներից կուժերով ջուր բեր, փարչեր լցրո՛ւ, ծաղիկներ լեցո՛ւր նրանց մէջ, քու հիւսած ծաղիկների պակը նե- տիր Դեպէտի փրփրած ալիքներին, իջի՛ր նրա ջրերին, ծաղիկի մի պակ ճանկիր, որ քու եարին տիրելու ցանկութեանը տիրանաս:

Ո՛չ, Յովհաննէսն ու իր Անու- շը, Սարոն, Մօսին այստեղ չեն գալ, նրանց խորհուրդը իրենց լեռների լանջերի ծաղիկներին մէջ է, լացող ուռենիների ստուերներում սպանն- ուած սէր են երգում, Դեպէտի ջրերի փրփուրները գրկած կան-

չում են՝ Անուշ, Սարո՛, բարձր սարերից ձէն են տալիս իրենց եարին . . . : Գնա՛ միացիր Հայոց աղջիկներին, Արա աստուծոյ կան- թեղի լոյսով ցօղուած Արայի Գահ- Արագած-լանջին ծաղիկ պաշտա- մունքի ու հրաշափառ Համբարձ- ման տօն՝ «Ջան Գիւլում» են տօնախմբում: Երգում են ամպերի տակից հոսող անձրեւը, ոգեղէն սարսուռով թրջուած են նրանց հոգիները, երգում են Սայաթ Նո- վու սիրոյ երգերը, երգում են հովիւներին, երգում են արտերի ցորեանի ծովերը, սարերի լանջե- րից հոսած հովիկները, ծաղիկների արթնած հրալքից արբեցած, Արա- յի Գահի չորրս գագաթները գրկած պար բռնում: Ճերմակ գգեստով դեռատի մի աղջիկ, վերցնում կու- ժը, շրջում չորս բոլորը, այնտեղից հանում առաջին առարկան, նրա տիրոջը մօտալուտ ամուսնութիւն գուշակում: Ապա, իւրաքանչիւր իրի հետ ընտրում են վիճականու- թեան տոմսակ, ուր գրուած է լինում խրատի խօսք, ուղղուած առարկայի տիրոջը: Ո՛չ մի պար- մանուհու չար բախտ չէին գուշա- կել, բոլորը թող ցնծային, իրենց անկախացած երկրի դրօշի ծիա- ծանը սիրոյ լոյս փուր իրենց դէմքերին:

Հայ, այստեղ չիք Հայոց լեռ- ներ, չիք նրանց լանջերի ձիւնոտ ծաղիկ, պայթող աղբիւրներ, սա- կայն տօնախմբի՛ր քու նախնիե- րի ծաղիկ պաշտամունքը, քու Յի- սուսի հրաշափառ Համբարձումը, շուրջը բոլորիւր քու մանչերին, երգիր նրանց Անուշի ու Սարոյի երգերը, «Բարձր Սարերը», ցե- դիտ նախնիների պաշտամունքը ցանի՛ր նրանց սրտիկներին, որ նրանց Հայկեան արմատները ամ- րանան, որպէս Հայ տողանցեն այս մոլորակում, ոչ մի ծովամբրիկ կամ ոլորահողմ անգոր լինի նրանց հողից պոկելու...:

ՆԻԿՈԼ ԱՂԱԲԱԲԵԱՆԻ ԳՈՒՆԱԳԵՂ ԱՇԽԱՐՀ

Շարունակուած էջ 15-էն

ակնյայտօրէն առանձնանում է մե- րօրեայ բազում ձեռագրերից: Նի- կոլ Աղաբաբեանի գեղանկարչու- թեան կշիռը ակնյայտօրէն օր օրի կը հզօրացնի կերպարուեստի աշ- խարհը»:

Նիկոլ Աղաբաբեան ծնած է 1964ին, Տաւուշի մարզի Կողբ գիւ- ղի մէջ: Աւարտած է Երեւանի Պետական Մանկավարժական Հա- մալսարանի գեղանկարչութեան բա- ժինը: 1992էն անդամ է Հայաստանի Նկարիչներու Միութեան, ինչպէս նաեւ Իւնեսքոյի Պրոֆէսիոնալ Նկա- րիչներու Միջազգային Միութեան: Ան ունեցած է աւելի քան 70 անհատական ցուցահանդէսներ Հա- յաստանի եւ արտերկրեայ տարբեր քաղաքներու մէջ, ինչպէս՝ Հոռոմ, Միլան, Վենետիկ, Փարիզ, Մոնթէ Գարլօ, Քանն, Նիս, Նիւ որք, Սան Փիթըրզպըք, Պեւլին, Մատրիտ եւ այլն: Նիկոլի գեղանկարչական աշխատանքները կը գտնուին Ժա- մանակակից արուեստի թանգա- րաններու ցուցասրահներու եւ անձ- նական հաւաքածոներու մէջ, որոնց

չարքին է Հայաստանի Պետական Պատկերասրահը, Գերմանիոյ Մշա- կոյթի Նախարարութեան Թանգա- րանը, Նիւ Եորքի Ս.բ Վարդան Եկեղեցւոյ Թանգարանը, Ջինաս- տանի Պետական Թանգարանը: Ինչ- պէս վերը նշուեց իր գործերը մաս կը կազմեն նաեւ յայտնի անձնաւո- րութիւններու անձնական հաւա- քածոներու, ինչպէս՝ Օրօրայի հիմ- նադիր Ռուբէն Վարդանեանի, Կազարոմի տնօրէն Ալէքսէյ Միւլե- րի, Փարիզէն՝ Արմէն Պողոսեանի եւ Թամարա Քոչարեան-Պետրոս- եանի, Ստենֆորտի համալսարա- նէն՝ պրոֆէսոր Թինա Սիլինկի, Ջիկրիտ Միւլեր Հօլցի, Փիէռ Կար- տէնի եւ այլոց:

Ներկայիս Նիկոլ կը գտնուի Լոս Անճելոս իր տիկնոջ եւ դստեր հետ: Համայնքիս արուեստասէր հա- սարակայնութիւնը շատ շուտով՝ Յունիս ամսուայ սկզբին առիթը պիտի ունենայ վայելելու Նիկոլ Աղաբաբեանի գործերու ցուցա- հանդէսը՝ ՀԲԸՄ Պոյաճեան սրա- հին մէջ: Այդ մասին աւելի մանրա- մասնօրէն համայնք կը տեղեկաց- ուի ծանուցումներու միջոցով:

ՅԱԲԱԿՅԱԿԱՆ

ԽՈՆԱՐ ՀԻԿ ԹՈՒԿՈՒՉԵԱՆԻ մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Տիգրան եւ Վարդուհի Սարաֆեան իրենց խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Յարութիւն եւ Արմենուհի Ֆօտուլեանին:
Առ այդ հետեւեալ նուիրատուութիւնները կը կատարեն՝ Պէյլանի Հայրենակցական Միութեան \$50 «Մասիս»ին \$50



Nourish your hair with natural products



www.GarniUSA.com Pasadena, CA 91102, USA

www.massispost.com

VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ Հին Գիրքերու Նորոգութեան Համար Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆԻՆ



Vahe Atchabahian

1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104 Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924 vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին T: (626) 797-7680 massis2@earthlink.net

ՄԱՐԶԱԿԱՆ

«Մանչեսթեր Սիթին» Հաւաքեց Ռեկորդային 100 Միաւոր Եւ Սահմանեց մի Քանի Ռեկորդ



Ֆուտպոլի Անգլիայի ախոյեանի տիտղոսը ժամանակից շուտ ապահոված «Մանչեսթեր Սիթին», Պրեմիեր լիգայի վերջին տուրում նուազագույն հաշուով յաղթելով «Սաութհեմթոնին», սահմանել է մի շարք ռեկորդներ:

Խոսեպ Գուարդիոլայի գլխավորած թիմն առաջնութիւնն աւարտեց 100 միաւորով, յաղթեց 32 տուրերում, խփեց 106 գոլ, տարաւ 16 արտագնայ յաղթանակ եւ 19 միաւոր գերազանցեց երկրորդ տեղը գրաւած թիմին: Դրանք բոլորը ռեկորդային ցուցանիշներ են Պրեմիեր լիգայում, գրում է Coral-ը:

Յիշեցնենք, որ «Մանչեսթեր Սիթին» Անգլիայի չեմպիոն էր դարձել 5-րդ անգամ՝ կրկնելով 1936/37, 1967/68, 2011/12 եւ 2013/14 մրցաշրջանների յաջողութիւնը:

«Եուվենտուսը»՝ Իտալիայի Ախոյեան



Թուրինի «Եուվենտուսը» պատմութեան մէջ 34-րդ անգամ հռչակուեց ֆուտպոլի Իտալիայի չեմպիոն՝ թարմացնելով սեփական ռեկորդը Իտալական A Սերիայի նախավերջին՝ 37-րդ տուրում «Եուվենտուսը» 0:0 հաշուով աւարտեց «Ռոմայի» դէմ արտագնայ հանդիպումը եւ անհասանելի դարձաւ երկրորդ տեղում գտնուող «Նապոլիին» համար:

«Նապոլիին» հիւրընկալուելիս 2:0 հաշուով յաղթեց «Սամպլորիային» եւ, հաւաքելով 88 միաւոր, գրաւեց երկրորդ տեղը (տեսանիւթ): «Եուվենտուսն» առաջ է 4 միաւոր:

«Եուվենտուսն» Իտալիայի ախոյեան դարձաւ 7-րդ տարին անընդմէջ: «Ռոման» 72 միաւորով երրորդն է եւ 2 միաւոր է առաջ չորրորդ տեղում գտնուող «Լացիոյից»:

Սալահը Պրեմիեր Լիգայի Լաւագոյն Ռմբարկու Գանաչուեց Ռմբարկուական Ռեկորդով

Ֆուտպոլի 2017/18թթ. Անգլիայի առաջնութեան լաւագոյն ռմբարկու դարձաւ «Լիվերպոլի» եւ Եգիպտոսի հաւաքականի յարձակուող Մոհամեդ Սալահը:

24-ամեայ Սալահը 36 խաղում դարձաւ 32 կոլի հեղինակ եւ ռմբարկուական ռեկորդ սահմանեց Անգլիայի առաջնութիւնում: Նախկինում ոչ մի ֆուտպոլիստի չէր յաջողուել 32 կոլ խփել Պրեմիեր լիգայի մէկ մրցաշրջանում:

Եգիպտացուց 2 կոլ պակաս խփեց «Տոտենհեմի» անգլիացի յարձակուող Հէրի Քեյնը: Ռմբարկուների ցուցակում լաւագոյն եռեակը եզրափակեց «Մանչեսթեր Սիթիի» արգենտինացի յարձակուող Սերխիո Ագուերոն, որը խփեց 21 կոլ:

Մինչեւ այս Անգլիայի առաջնութեան ռմբարկուական ռեկորդը պատկանում էր Ալան Շիրերին, Կրիշտիանու Ռոնալդուին ու Լուիս Սուարեսին, որոնք մէկ մրցաշրջանում խփել էին 31-ական կոլ:


Յիշեցնենք, որ այս տարի Մոհամեդ Սալահն Անգլիայի առաջնութեան լաւագոյն ֆուտբոլիստ էր ճանաչուել Պրեմիեր լիգայի, Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների ասոցիացիայի (PFA) եւ լրագրողների վարկածով:

Եուրա Մովսիսեանը Հրաւիրուել է Հաւաքական

Ֆուտպոլի Հայաստանի հաւաքականի Մայիսի 29-ին եւ Յունիսի 4-ին Աւստրիայում կ'անցկացնի ընկերական հանդիպումներ Մալթայի եւ Մոլդովայի հաւաքականների հետ:

Ինչպէս տեղեկացնում է Հայաստանի ֆուտպոլի ֆեդերացիայի մամուլի ծառայութիւնը, հաւաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասեանը հրապարակել է արտերկրում հանդէս եկող այն ֆուտպոլիստների անունները, որոնք ստացել են նախապատրաստական հաւաքին մասնակցելու հրաւեր:

Եուրա Մովսիսեանը երկարատեւ ընդմիջումից յետոյ կրկին հրաւիրուել է հաւաքական:



«Արսենալը» Յաղթեց Վենգերի Վերջին Խաղում Միխթարեանը Մասնակցեց Ամբողջ Խաղին

Ֆուտպոլի Անգլիայի առաջնութեան վերջին՝ 38-րդ տուրում «Արսենալը» յաղթեց «Հադերսֆիլդ»-ին նուազագույն հաշուով:

«Արմենայրես»-ի հաղորդմամբ՝ երկու ակումբներն էլ մեկնարկային ըուպներին չկարողացան օգտագործել իրենց տրուած հնարաւորութիւնները: «Արսենալ»-ին 1000-րդ խաղը Պրեմիեր լիգայում օգնեց յաղթել գաբոնցի յարձակուողի՝ Օբամեյանգի կողմէ միայն: Խաղի 38-րդ ըուպին Ահարոն Ռեմզիի փոխանցումից յետոյ Օբամեյանգը բացեց խաղի հաշիւը:

Հայաստանի ազգային թիմի աւագ Հենրիխ Մխիթարեանը «Արսենալ»-ի մեկնարկային կազմում էր եւ մասնակցեց ամբողջ խաղին:

«Զինագործները» վերջին հանդիպումն անցկացրեցին Արսէն Վենգերի գլխավորութեամբ, ով 828 խաղն անցկացրեց լոնտոնեան ակումբի ղեկին:

«Արսենալը» կը Բարձրացնի Հենրիխ Մխիթարեանի Աշխատավարձը

Լոնտոնի «Արսենալը» պէտք է ստիպուած բարձրացնի Հենրիխ Մխիթարեանի աշխատավաճի չափը, եթէ նրա պայմանագրի աւարտից յետոյ նորն առաջարկի: Այդ մասին յայտնում է THE DAILY MAIL կայքը:

Հենրիխ Մխիթարեանն այժմ շաբաթական ստանում է 144 հազար ֆունտ սթեռլինգ աշխատավարձ: Եթէ «Արսենալը» նոր պայմանագիր առաջարկի հայ ֆուտպոլիստին, ապա ըստ նախնական պայմանաւորուածութեան, աշխատավարձը պէտք է բարձրանայ եւ կազմի 244 հազար ֆունտ: Բացի այդ, պայմանագիրը երկարաձգելու համար Հենրիխ Մխիթարեանը կը ստանայ նաեւ 8,65 մլն ֆունտ յաւելեալ պարգեւավճար:

Ի դէպ, ինչպէս յայտնում է լրատուամիջոցը, անգլիական շատ ակումբներ նման եղանակով ձգտում են գայթակղել ֆուտպոլային աստղերին, ինչպէս նաեւ խթանել նրանց աւելի լաւ հանդէս գալու համար:

Նեյմարն Ակումբակիցներին Յայտնել է որ ԱԱ-2018-ից Յետոյ Չի Վերադառնայ ՊՍԺ

ՊՍԺ-ի եւ Պրագիլիայի հաւաքականի յարձակուող Նեյմարը ֆրանսական թիմում խաղընկերներից մի քանիսին արդէն տեղեակ է պահել, որ Յունիս-Յուլիսին Ռուսաստանում կայանալիք աշխարհի առաջնութիւնից յետոյ չի միանայ փարիզեան ակումբի, հաղորդում է todomercadoweб-ը: 26-ամեայ ֆուտպոլիստի հայրը բանակցում է Մադրիդի «Ռեալի» նախագահ Ֆլորենտինո Պերեսի հետ եւ մեծ է հաւանականութիւնը, որ նա կը տեղափոխուի Արքայական ակումբը:

Աւելի վաղ ՊՍԺ-ից յայտնել էին, որ Նեյմարի տրասֆերը բացառում է: Յիշեցնենք, որ Ֆրանսայի ախոյեանները «Բարսելոնային» Նեյմարի համար վճարել են 222 միլիոն եւրո: Նրա պայմանագիրը ՊՍԺ-ի հետ նախատեսուած է մինչեւ 2022 թուականը:

Ճեդերերը՝ Դարձեալ Աշխարհի Առաջին Ռակետ, Նաղալը՝ Երկրորդ Տեղում

Սպանացի Ռաֆայէլ Նաղալը Մադրիդի «Մասթերս» մրցաշարի քառորդ եզրափակչում աւստրիացի Դոմինիկ Տիմին պարտուելուց յետոյ նահանջեց համաշխարհային դասակարգման առաջին տեղից:

Մայիսի 14-ին աշխարհի նախկին ռակետ, շուեյցարացի Ռոջեր Ֆեդերերը դարձեալ կը գլխավորի համաշխարհային դասակարգման աղիւսակը:

Նաղալը կարող է վերադարձնել առաջին ռակետի կարգավիճակն արդէն յաջորդ շաբաթ, եթէ Հոռմի մրցաշարում նուաճի հաղթողի կոչումը:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱԳԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒԵՐՈՒ